

Հայ պարբերական մամուլի հարցեր

ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԵԼԵԱՆ

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՔԻԻԸ

1794 թ.ի Հոկտեմբերի 16ին, հեռաւոր Հնդկաստանի Մադրաս քաղաքին մէջ, Շիրազեցի Յարութիւն Քահանայ Շմաւոնեանի (1) խմբադրութեամբ, եւ անոր տպարանէն՝ կը ծնէր հայ մամուլի պատմութիւնը, «Աղբարար»ի՝ հայ անդրանիկ պարբերականի լոյս ընծայումով:

Թէեւ կարճատեւ դոյութիւն մը ունեցաւ «Աղբարար»ը (2), սակայն անով սկսող աւանդութիւնը, տարիներու թաւալքին հետ, հզաւ վարակիչ ու պատկառելի:

Հայ մամուլի ծնունդի թուականէն մինչեւ այսօր անցած են 184 տարիներ: Այս ժամանակամիջոցին, հայ մամուլի ցանցը ընդարձակուած է: Ուր որ եղեր է հայը, իբրեւ հաւաքականութիւն, հոն եղեր է նաեւ հայ մամուլը: Եւ երբեք զարմանալի չէ այսօր նկատել, որ հայ մամուլի հետքերը մեզ կը հասցնեն մինչեւ Ժայրադոյն Արեւելք, մինչեւ Մանչուրիա...

Եթէ քաղաքական ու տնտեսական պայմանները եղեր են նըպաստաւոր՝ հիմնուեր են տպարաններ, ու տպագրող զիրքերու կողքին՝ ունեցեր ենք տպագիր թերթեր: Այլապէս՝ մեր թերթերը, դաւաճներու մէջ, եղեր են վիմատիպ, խմորատիպ կամ ձեռագիր: Եւ յառաջացող ժամանակին հետ, ուռճացեր է հայ մամուլը: Ու այսօր՝ ան մեզի կը ներկայանայ պատկառելի թիւով ու յարգանք պարտադրող անցեալով:

1. Յարութիւն Քահանայ այսպէս կը գրէ իր անունը:

2. 1794-1796 թթ.ուն լոյս տեսած՝ 18 տետր:

Վերջին տասնամեակներուն, Հայ մամուլով, եւ յատկապէս Հայ մամուլի մատենագիտութեամբ զբաղող բանասէրներուն համար հարց եղած է անոր քանակը: Եւ հակառակ Հայ մամուլի յարարերարքար անցած կարճ ժամանակաշրջանին՝ 184 տարիներ, այդ ուղղութեամբ դոյացած տարակարծութիւնները շատ խորունկ են: Սորունկ՝ մանաւանդ անոր համար որ պատճառները լուրջ են, դժուարութիւնները՝ շատ, կարելիութեան սահմաններուն մէջ սակայն մեծ տոկոսով հարթելի:

Սօսելու կամ դրելու համար Հայ պարբերական մամուլի թիւին շուրջ, առաջին հերթին հարկ է յտակացնել թէ ի՞նչ բան կարելի է նկատել «պարբերական մամուլ», ի՞նչ բան հարկ է դուրս ձգել, չըհաշուել որպէս թերթ: Գծախտարար ցարդ կարելի չէ եղած վերջնական տարազ հաղցնել «պարբերական մամուլ» հասկացողութեան: Եւ այս իրողութենէն կը ծաղին բաղմաթիւ դժուարութիւններ: Ոմանք՝ պարբերական մամուլի մէջ կը գետեղեն բոլոր տեսակի օրացոյցները (պատի, սեղանի, եւն.), երբ ուրիշներ կամ բոլորովին կը մերժեն դանոնք համարել «պարբերական մամուլ», եւ կամ՝ կը ջնկեն միայն անոնք, որոնք «օրացոյց» անունը կը կրեն, սակայն բովանդակութեամբ եւ ձեւով կը համապատասխանեն տարեցոյցներու եւ տարեգիրքերու բովանդակութեան: Ոմանք կը մերժեն խմորատիպ ու ձեռագիր թերթերը ընդգրկել պարբերական մամուլի ցուցակներու մէջ, ուրիշներ՝ յառաջ կ'երթան մինչեւ իսկ ներդրաւելու մէկ օրինակով պատրաստուած դպրոցական, դասարանային «թերթ»երը, որոնց խմբագիրները երբեմն հաղիւ տասը տարիքը բոլորած տղակներ լցած են: Ոմանք՝ կը հաշուեն պատի թերթերը, ուրիշներ կը մերժեն դանոնք, մինչեւ իսկ եթէ տպագիր եղած ըլլան անոնք: Տակաւին չենք խօսիր անանուն հաւաքածոներ, զանազան առիթներու պատահական հրատարակութիւններ մամուլ հաշուելու արամադրութեան մասին:

Հայ մամուլի մատենագիտութեամբ զբաղած ականաւոր բանասէրներէն Գարեգին Լեւոնեան ու Յովհաննէս Պետրոսեան, մամուլի ցանկերէն դուրս կը ձգեն խմորատիպ ու ձեռագիր թերթերը, հոգ չէ թէ երբեմն անդիտակցաբար կը յիշատակեն անոնցմէ ոմանք, տպագիր կարծելով դանոնք, ինչպէս է պարագան «Բանբեր Պարտիզակեան»ի (3): Ա. Կիրակոսեանի համար ընդունելի են ձեռագիր կամ

3. Գ. Լեւոնեան, Հայ Պարբերական Մամուլը. Լիակատար Յուցակ Հայ Լըրագրութեան (1794-1934), Երեւան, 1943, էջ 7: Յովհ. Պետրոսեան, Հայ Պարբերական Մամուլի Բիրիւոգրաֆիա, հար. 1, Երեւան, 1956, էջ 136: Երկուքն ալ թերթի հրատարակութեան տարեթիւը կը նկատեն 1848, որ ըլլալու է 1847: Ֆեանբեր

խմորատիպ բոլոր թերթերը, զորս ընդհանրապես ցանկալիքով է նախատեսված կատարուած ուսումնասիրութիւններէ, ցանկերէ եւ յօդուածներէ: Արտաշէս Կարինեան տրամադիր է ընդունելու ձեռագիր ու խմորատիպ թերթերը: Ան կը գրէ. «Մենք չենք խօսում արդէն այն մասին, որ մենք նոյնիսկ այսօր միայն անորոշ տեղեկութիւններ ունենք շատ եւ շատ պարբերականներէ՝ վիմատիպ, խմորատիպ եւ դարձեալ անաչափ տակաւն ձեռագիր ամսագրերի մասին» (4): Մ. Բարլոյեան համակարծիք է Կարինեանի, չնչին տարբերութեամբ մը: «Ծիշտ չէ նաեւ ձեռագիր (չբաղմացուած) թերթերը պարբերական մամուլի օրգաններ համարելը», կը գրէ ան (5): Այսինքն՝ Մ. Բարլոյեան կ'ընդունի ձեռագիր թերթերու «քաղաքացիական իրաւունքը», պայմանով որ մէկ օրինակէ աւելի բաղմացուած ըլլան անոնք:

Ինչպէս կը տեսնուի վերեւ յիշատակուած քանի մը օրինակներէն, «պարբերական մամուլ» հասկացողութեան սահմանները, նորադոյն ժամանակներու բանասէրներուն մօտ, բաւական ընդարձակուած են: Ձեռագիր թերթերն անգամ ընդունիլ մամուլ, «պարբերական թերթ» հասկացողութեան մէջ, պայմանով որ մէկ օրինակէ աւելի «տպագրանակ» ունեցած ըլլան անոնք:

Երեւանի Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանին մէջ դոնուոյ թորոս Ազատեանի հարուստ արխիւէն ի յայտ կու գայ թէ Միսաք Մեծարենց, Կ. Պոլսոյ Կեդրոնական վարժարանին մէջ, 1905 թ.-ին, երկրորդական դասարանի աշակերտ, խմբադրած է «Քահ-քահ» երգիծաթերթը, միայն մէկ օրինակով (6): Եթէ Մեծարենց երիտասարդութեան սեմին հրատարակած է «Քահ-քահ»ը, ուրիշներ սակայն, հազիւ իրենց կեանքի առաջին տասնամեակը ընտրած, կամ քիչ մը աւելի ուշ, դպրոցական գրասեղաններու վրայ, «լոյս ընծայած» են նմանօրինակ թերթեր, ինչպէս՝ Վ. Թէքէեան («Միւզ», 1890 թ.), Ինտրա («Սոխակ», 1887 թ.), Ա. Ալպոյաճեան («Լուսին», 1890 թ.), Երուանդ Օտեան («Վառարան», «Անհաշտ», 1882 թ.), եւն.:

Պարտիզական» մասին ընդարձակ տեղեկութիւններ կը հայթայթէ թորոս Ազատեան, որ կու տայ նաեւ անոր թիւերէն մէկուն էջի մը նկարը (տես՝ Թ. Ազատեան, Մշակոյթ Ազգագրական Տարեգիրք, Ա. տարի, 1947, էջ 134-138):

4. Ա. Բ. Կարինեան, Ակնարկներ Հայ Պարբերական Մամուլի Պատմութեան հար. Ա., Երեւան, 1956, էջ 8:

5. Մ. Բարլոյեան, Հայ Պարբերական Մամուլի Մատենագիտական Յուշակների մի Պամի Հարցերի Մասին, «Բանբեր Երեւանի Համալսարանի», 1977, թիւ 2, էջ 263:

6. Ալեքսան Ծարուբեան, Մեծարենցեան Երկու նորայայտ էջ, «Զարթօնք» օրաթերթ, 1978, Փետրուարի 21:

Արդ, կը ծաղի հարց մը. արդեօ՞ք հայ գրականութեան ծանօթ ու ականաւոր այս մտաւորականներուն՝ իրենց պատանեկութեան «խմբադրած» թերթերը, համեստ բովանդակութիւններով, դուրս պէտք է ձգել հայ «պարբերական մամուլ» հասկացողութեան ենթակայ տարագումով պատրաստուած պարբերական մամուլի ցանկերէն, որովհետեւ «յոյս տեսած» են մէկ օրինակով, մինչ հոն պիտի ներդրաւունքն բոլորովին անծանօթ «խմբապլեր»ներու կողմէ հրատարակուածները, որովհետեւ ընդօրինակուած են մէկէ աւելի օրինակներով: Մեր կողմէ պատրաստուած նոր թերթերու ցանկին մէջ, ի մէջ այլոց, կայ օրինակը «Մովակ»ին, որ մէկ օրինակով լոյս տեսած է, սակայն որպէս աշխատակից ունեցած է Թլկատինցիին ու Եփրատ Գոլէճի ծանօթ դասախօսներէն շատեր, եւ որպէս բովանդակութիւն՝ հաւանաբար կը մնայ շատ աւելի տպաւորիչ, քան տպագիր թերթերէն ոմանք: Եթէ այդ օրերուն «Մովակ»ն ու անոր նման թերթերը լոյս տեսած են ձեռագիր, անոր համար միայն, որ նիւթական միջոցները եղած են անբաւարար, կամ ալ քաղաքական դրութիւնը՝ աննրպաստ: Մեր օրերուն, միջոցներու առատութեան շնորհիւ, սփիւռքահայ վարժարաններու, կամ յաճախ դանաղան դասարաններու, եւ մինչեւ իսկ մանկապարտէզներու կողմէ լոյս կ'ընծայուին տպագիր կամ մեքենայիւր բաղմադրուած թերթեր, ու անոնք, առանց ընդդիմութեան, արդարօրէն մուտք կը գործեն մեր պարբերական մամուլի հ'ւ. սլաութեան, ե՛ւ ցանկերուն մէջ: Ինչո՞ւ նոյն իրաւունքը զլահալ այն ձեռագիր թերթերուն, որոնք մանաւանդ լոյս ընծայուած են ականաւոր մտաւորականներու կողմէ, իրենց պատանեկութեան, կամ դպրոցներու կողմէ, որոնք, սակայն, չեն ունեցած մերօրեայ բարիքներն ու միջոցները:

Հիմնական շփոթ մըն ալ յառաջացած է ու կը շարունակէ յառաջացնել տարեցոյցներու, տարեգիրքերու, օրացոյցներու, տոմարներու եւ ալյոմներու սյարագան: Խնդրոյ առարկայ պարբերական հրատարակութեան անունը չէ որ պիտի որոշէ կամ բնութագրէ անոր «պարբերական մամուլ»ի մաս կազմելը կամ ոչ: Բանասէրներն ու հայ մամուլի մատենագիտութեամբ զբաղողները հարկ է որ առաջնորդութիւն տուեալ պարբերական հրատարակութեան բովանդակութենէն: Բովանդակութիւնն է, որ հերթականութեան կողքին, պիտի բնորոշէ անոր բնոյթը: Անունները կրնան շփոթ յառաջացնել ու սխալ ուղիի վրայ դնել բանասէրները: Ատոր լաւագայն օրինակը կը հանդիսանայ Կալիթայի Մարդասիրական ձեմարանի կողմէ հրատարակուած «Օրացոյց»ները, որոնք երբեմն «Յուլյակ» կամ «Յուլյաք» (7) ալ ան-

7. Մեր տրամադրութեան սակ կողմերէն՝ 1824, 1825, 1826, 1828, 1829.

ուանուած են հրատարակիչներուն կողմէ: Ոչ մէկ ատեն, ոչ մէկուն կողմէ որպէս պարբերական մամուլ համարուած է գրեթէ յիսուն տարիներ շարունակաբար լոյս ընծայուած այս պարբերական հրատարակութիւնը, քանի որ, ցարդ, հայ պարբերական մամուլով զբաղողները, անոր անունէն առաջնորդուելով, զայն զետեղած են օրացոյցներու ցանկին մէջ, իսկ անոնք, որոնք օրացոյցները ընդունած են որպէս պարբերական թերթ՝ չեն նշմարած զայն: Մեր տրամադրութեան տակ եղող տարիները՝ 1824-1829, 1849, 1854-1857, մեզի իրաւունք կու տան խնդրոյ առարկայ «Օրացոյց»ը ընդունելու հայ պարբերական մամուլի որպէս լիիրաւ անդամ, մեկնակէտ ունենալով ոչ թէ անոր անունը, այլ բովանդակութիւնը: Ճիշդ է որ «Օրացոյց»ի զանազան տարիները ունին օրացոյց-տօնացոյց բաժինը, սակայն յաճախ նոյնքան եւ աւելի էջերով անոնք ունին «Մաս երկրորդ, յորում պարունակին՝ բանասիրական ճառք, արտավէպք, եւ զանազան հարկաւոր դիտելիք, եւն.» եւ յաճախ ազգային-մշակութային դանձեր կան անոնց մէջ: Կալիաթայի «Օրացոյց»ները, Կ. Պոլսոյ Սբ. Փրկչի «Տարեցոյց»ներուն եւ Թէոդիկի «Տարեգիրք»երուն օրինակով, զանոնք կանխող տարեցոյց-տարեգիրքեր կը հանդիսանան: Նմանօրինակ պարագայ մը կը ներկայացնէ Յ. Տէր Աբրահամեանի «Պատկերագար. Օրացոյց 1871 Թուակ. Քրիստոսի եւ Ազգիս Հայոց ՌՅԻ = 1320» հրատարակութիւնը, լոյս տեսած Թէոդոսիա, Խալիբեան տը պարանէն:

Հոս, փակագլծի մէջ, հարկ է նշել նաեւ, թէ կարգ մը բանասէրներ, մօտիկ անցեալին, տարեցոյցներն ու տարեգիրքերը փորձած են դուրս ձգել «հայ պարբերական մամուլ», հասկացողութենէն: Կամ՝ «Հայոց պարբերական մամուլի» մէջ առ առաւելն իրբեւ յաւելուած պէտք է ուրոյն բաժնի մէջ ամփոփուին» (8), ինչպէս կ'առաջարկէ Հ. Ներսէս Ակիւնեան: Նման կարծիք ունի նաեւ այլ բանասէր մը՝ Ներսէս Գասապեան, ըստ որուն «... աւելի նպատաւարմար պիտի ըլլար եթէ ընդհանուր ցանկէն զատուելով գէթ առանձին զլուստով մը տրուէին տարեցոյցներն ու տարեգիրքերը, զորս կարելի չէ թերթերուն կարգը դասել» (9):

Չենք ուղեր ծանրանալ այս հարցին վրայ, քանի որ, ինչպէս ամենուրեք, մեր մօտ ալ վերջնական համոզում դոյացած է որ տարեգիրքերն ու տարեցոյցները անպայմանօրէն մաս կը կազմեն «պար-

Թթ.ու. հրատարակութիւնները կը կրեն «Յուշակ» անունը, իսկ 1827 թ.ինը՝ «Յուշակ»:

8. «Հանդէս Ամսօրեայ», 1936, թիւ 4-6, էջ 280:

9. «Բազմավէպ», 1937, թիւ 6-9, էջ 202:

բերական մամուլ» հասկացողութեան :

Ուրեմն, վերադառնալով մեր հիմնական նւթին՝ հայ պարբերական մամուլի քանակի հարցին, առաջին հերթին հարկ է յտակացնել պարբերաթերթ հասկացողութիւնը, ապա անցնիլ թիւի ճշդ դամին : Եթէ, համաձայնութիւն չգոյանայ այս կապակցութեամբ, վստահաբար հայ պարբերաթերթերու համրանքը պիտի տարբերի բանասէրէ բանասէր : Անոնցմէ ոմանց պարադային՝ հարիւրաւոր թերթեր ցանկերէ դուրս պիտի մնան : Ուրիշներու տուած թիւերը պիտի թուին «առասպելական», կամ՝ չափազանցուած :

Մեր ժամանակներուն, հայ պարբերական մամուլի առաջին ամբողջական ցուցակը տուած է Գարեգին Լեւոնեան (10) : Հակառակ թերութիւններու եւ մոռացումներու (11) Լեւոնեանի աշխատասիրութիւնը կարելի է նկատել հետագայ աշխատանքներու հիմնաքարը : Սինչեւ 1934 թ.ը ընդգրկող Գ. Լեւոնեանի «լիակատար» ցուցակը կը հաշուէ 1586 անուն թերթ, առաւել՝ 21 հայատառ թրքերէն թերթ, ընդհանուր դումարը հասցնելով 1607ի (12) :

Չորս տարիներ ետք, 1938 թ.ին հրատարակուած «Հայ Հանրապետակ»ին մէջ, Մկրտիչ Վրդ. Պոտուրեան հայ պարբերական մամուլի թիւը կը գնահատէ 2600 (13) : Ինչպէս կը տեսնուի, սկիզբէն իսկ գոյութիւն ունի լուրջ տարակարծութիւն մը՝ հայ թերթերու թիւին մասին :

Հետաքրքրական է սակայն հայրենի բանասէր Արտաշէս Կարինեանի տեսակէտը այս առնչութեամբ : Հսկայական ուստումով մը, ան՝ հայ մամուլի թիւը կը հասցնէ աւելի քան 4000ի, 1956 թ.ին հրատարակուած իր գործին մէջ (14) : Նոյն տեսակէտը կը բաժնէ նաեւ, նոյն թուականին լոյս տեսած իր գրքին մէջ, Ս. Յ. Բարսեղեան :

10. Գ. Լեւոնեան, Հայ Պարբերակամ Մամուլը. Լիակատար Ցուցակ Հայ Լըրագրութեամ (1794-1934), Երևան, 1934 :

11. Գ. Լեւոնեանի խնդրոյ առարկայ աշխատասիրութեան նուիրուած դասխօսականներու մէջ, Հ. Ներսէս Ակիմեան («Հանդէս Ամսօրեայ», 1936, թիւ 4-6, էջ 276-284) եւ Ներսէս Գասապեան («Բազմավէպ», 1937, թիւ 6-9, էջ 201-206) առանձինն կատարած են 98 յաւելումներ :

12. Գ. Լեւոնեան իր ցուցակէն դիտակցարար դուրս ձգած է միօրեայ թերթերը՝ լոյս ընծայուած յատուկ առիթներով, պատի թերթերը (մինչեւ իսկ տպագիր), ձեռագիր ու խմորատիպ թերթերը : Այս պարագան հարկ է նկատի ունենալ հայ պարբերական մամուլի քանակի ճշդորոշման աշխատանքներու ստեղծ :

13. Հ. Մկրտիչ Վարդ. Պոտուրեան, Սմբ., Հայ Համրագիտակ, Պուրբէշ, 1938, էջ 4 :

14. Ա. Բ. Կարինեան, Սջ. աշխ., էջ 8 :

Ան կը զբէ՛. «1794 թուականից մինչեւ 1955 թուականը Հայաստանում եւ աշխարհի տարբեր վայրերում ոչ լրիւ տուեալներով հայերէն լեզուով լոյս են տեսել շուրջ 4000 անուն թերթ եւ ժուռնալ» (15) : Մինչդեռ, դրեթէ նոյն օրերուն, Յովհաննէս Պետրոսեան կը յայտնէ բոլորովին հակոտնեայ տեսակէտ մը : Ան, իր պատրաստած ցուցակին վրայ աւելցնելով նաեւ խմորատիպ թերթերն ու իրեն անծանօթ մնացած թերթերը (Յ. Պետրոսեանի գնահատանքով՝ շուրջ 100), հայ թերթերու ընդհանուր թիւը կը համարէ 2000 (16) : Իսկ, Յ. Պետրոսեանի դործին նուիրուած դրախօսականի մը մէջ, Ներսէս Կասապեան կը յայտնէ աւելի տոկոսն ու հաւասարակշռուած կարծիք մը. «...հայ պարբերականներու թիւը ոչ-աւելի քան 3000 կարելի է հաշուել, որոնցմէ միջին հաշուով 2500-2600-ը սպառիչ եւ 3-էն մինչեւ 4 հարիւրը՝ խմորատիպ» (17) : Միւս կողմէ, կրկին հայ մամուլի դժուր պրպտումներ կատարող Արտաշէս Տէր Խաչատուրեան, ժխտելով վերեւ արտայայտուած տեսակէտները, 1961 թ.ին հրատարակած իր դրբոյկին մէջ կը զբէ՛. «մօտաւորապէս 2500-2600 թերթեր պէտք է ունեցած ըլլանք» (18) :

Որպէս ամբողջական ցուցակ, Ա. Կիրակոսեանի «Հայ Պարբերական Մամուլի Մատենագիտութիւնը» (19), լոյս տեսած 1970 թ.ին, կը հանդիսանայ հայ թերթերու վերջին համահաւաք ցանկը : Համաձայն այս մատենագիտական աշխատութեան, հայ թերթերու ընդհանուր դումարը կը հասնի շուրջ 3325-ի :

Առաջին հայ պարբերաթերթին՝ «Ազդարար»ի վերատպութեան առիթով գրած իր «Երկու Ոսքե»ին մէջ, 1970 թ.ին, Մարգարիտ Մըլիթարեանն ալ, իր կարգին, կը յայտնէ թէ «...հայ ժողովրդի կեանքի անբաժան ուղեկիցներն են եղել պարբերական հրատարակութիւնները, որոնց թիւը վաղուց անցել է երեք հազարից» (20) :

15. Խ. Յ. Բարսեղեան, Բոլշեիկեան Հայ Պարբերական Մամուլի Պատմութիւն, 1900-1920, Երևան, 1956, էջ 5 :

16. Յովհ. Պետրոսեան, Հայ Պարբերական Մամուլի Բիբլիոգրաֆիա, հտր. 2, Երևան, 1957, էջ Թ :

17. «Պատմա-Բանասիրական Հանդէս», 1961, թ. 3-4, էջ 318-319 :

18. Արտաշէս Տէր Խաչատուրեան, Հայ Մամուլի Ցուցահամալէս (1794-1961), Պէյրութ, 1961, էջ 7 :

19. Ա. Կիրակոսեան, Հայ Պարբերական Մամուլի Մատենագիտութիւն (1974-1961), Համահաւաք Ցանկ, Երևան, 1970 : Ա. Կիրակոսեանի այս դործին մէջ մտած են մինչև իր ժամանակը կատարուած յաւելումները :

20. «Ազդարար», Հայ Անդրանիկ Պարբերականը, 1794-1796, Մազրաս, Վերատպութիւն, 1970, էջ ԺԹ :

Ժամանակագրական կարգով յաջորդ կարծիքը կը պատկանի Հայ դիրքի պատմութեան ու մատենադիտութեան հմուտ բանասէր Ռաֆայէլ Իշխանեանին, որ 1974 թ.ին, «Գրական Թերթ»-ի մէջ հրատարակած յօդուածով մը, մեր թերթերու ընդհանուր թիւը կը գնահատէ 3500 (21) : Իսկ նորագոյն տեսակէտը կը պատկանի Մ. Բարլոյեանի, ըստ որուն, «Հայ պարբերականները ընդհանուր թիւը առ այժմ պարտում է 3000-ի չուրջ» (22) :

Երբ կը փորձենք ճշդել ցարդ լոյս տեսած Հայ թերթերու ընդհանուր թիւը, ու կը քննենք այդ ուղղութեամբ կատարուած աշխատանքներն ու արտայայտուած կարծիքները, անհրաժեշտութենէ աւելի կենսական կը նկատենք ի մտի ունենալ արտայայտուած կարծիքներուն ժամանակը, թուականը : Ժամանակը, այս պարագային, կարեւորագոյն ազդակներէն մէկն է : Երկու իրարամերժ, նոյնիսկ համանման կարծիքներու միջև ինկող ժամանակամիջոցին, անպայմանօրէն Հայ մամուլը հարստացած կ'ըլլայ նոր անուններով, անպայմանօրէն մոռցուած թերթեր կը յայտնարեւոյն, ինչ որ, երկու պարագաներուն ալ, պատճառ կը հանդիսանայ Հայ թերթերու քանակի փոփոխութեան : Գծարկտարար «Ժամանակ» ազդակը ընդհանրօրէն անտեսուած է Հայ թերթերու թիւի ճշգրտումն աշխատանքներուն մէջ : Ուստի, երբ հոս, այս ուսումնասիրութեամբ պիտի փորձուի համեմատական ու բազդատական աշխատանքը կատարել ցարդ արտայայտուած տեսակէտներուն, հասնելու համար կարելի չափով ճշմարտագոյնին մօտեցող թիւին, առաւելարար հիմք պիտի ծառայէ «Ժամանակ» ազդակը :

Նախապէս ըսուեցաւ թէ Գ. Լեւոնեանի լիակատար ցուցակին համաձայն, մինչեւ 1934 թ.ը դոյուրութիւն ունեցած են 1607 թերթեր : Մանաւանդ այսօր, կասկածէ վեր է որ Գ. Լեւոնեանի աշխատասիրութիւնը, որպէս առաջին ընդհանուր եւ ամբողջական դորձ մեր ժամանակներուն համար, բաւական մեծ թիւով մոռացումներ պիտի ունենար, ու չորս տարի աւելի ուշ, երբ Մկրտիչ Պոտուրեան պիտի տար 2600 թիւը, երբք չափազանցած պիտի չըլլար, քանի որ 1934-1938 թթ.ուն չուրջ 275 նոր թերթեր կը հրատարակուէին, եւ մանաւանդ որ Պոտուրեան վարդապետի համար «Հայ մամուլ» Հասկացողութիւնը աւելի լայն սահմաններ պիտի ընդգրկէր : Ուրեմն՝ եթէ նրկատի ունենանք չորս տարիներու ընթացքին աւելցած նոր անուններ

21. Ռ. Իշխանեան, Հայ Մամուլը 180 Տարեկան է, «Գրական Թերթ», 1974, Թիւ 40, էջ 4 :

22. Մ. Բարլոյեան, Աշ. աշխ., էջ 265 :

րը, Գ. Լեւոնեանի կողմէ եղած մոռացումները, նաեւ ասոնց՝ վրայ գումարենք այս վերջինին կողմէ անտեսուած խմորատիպ ու ձեռագիր բաղմամբիւ թերթերը, որոնք ընդհանրապէս լոյս տեսած են դաւառներու մէջ, երբեք ալ զարմանալի պիտի չթուի Պոտուրեան վարդապետի կողմէ ներկայացուած 2600 թիւը, մինչեւ իսկ եթէ քչիկ մը չափազանցուած ըլլայ ան :

Զարմանք պատճառողը պիտի ըլլայ Յովհ. Պետրոսեանի զնահատականը՝ 2000, արտայայտուած 1957 թ.ին : 1934 թ.էն մինչեւ 1957 թ. Հայ մամուլի մատենադիտութիւնը արձանագրած է շուրջ 800 նոր թերթերու յաւելում մը (23) : Այսինքն՝ այդ ժամանակամիջոցին լոյս ընծայուած են 800 նոր թերթեր : Պարզ գումարումով մը՝ Գ. Լեւոնեանի 1607 թիւը պիտի դառնար շուրջ 2400, տակաւին առանց հաշուելու իր իսկ կողմէ յիշատակուած դանազան պատճառներով դուրս ձգուած անունները : Արտ. Կարինեանի կարծիքը, արտայայտուած նոյն օրերուն, անկասկած որ պիտի նկատուի «առասպելական», սակայն ոչ ներկայացուած համեմատութեամբ :

1961 թ.ին արտայայտուած Ա. Տէր Խաչատուրեանի զնահատականն ալ (շուրջ 2500-2600) իրողութեան չի համապատասխաներ : Միշտ հիմք ընդունելով Գ. Լեւոնեանի տուած թիւը (1607), 1934 թ.էն մինչեւ 1961 թ., Հայ մամուլը հարստացած է շուրջ հազար անուն նոր թերթերով : Ուստի, եթէ միայն այդ հազարը գումարենք 1607ին վրայ, նուազագոյնը կ'ունենանք 2600 անուն : Առանց հաշուելու մինչ այդ թուականը եղած մոռացումները, անտեսումները՝ խմորատիպ, ձեռագիր ու պատի թերթերուն, որոնք Հայ մամուլի մատենադիտութեան ու ցանկերուն մէջ ընդունելու ջերմ պաշտպաններէն է Ա. Տէր Խաչատուրեան : Նոյնինքն Ա. Տէր Խաչատուրեան, եւ ուրիշներ, հետագային կատարած են հարիւրաւոր յաւելումներ :

Հոս հարկ է նշել նաեւ նոր պարագայ մը :

Հայ մամուլի մատենադիտական ցանկերուն մէջ միշտ ալ նրկատի առնուած են Հայատառ թրքերէնով լոյս տեսած թերթերը, սակայն յաճախ անտեսուած են այլ լեզուներով լոյս տեսած ու տեսնող Հայկական թերթերը : Հայ մամուլով զբաղող բանասէրներէն ո-

23. 1934-1967 թթ.ու Հայ համուլի յաւելումները քաղած ենք Ա. Կիրակոսեանի «Հայ Պարբերական Մամուլի Մատենադիտութիւն» հատորին «Հայ Պարբերական Մամուլը Ըստ Ժամանակագրութեան» բաժինէն (էջ 507-522), մեր կողմէ կատարուած անշան սրբագրութիւններով :

մանք կողմնակից են ոչ-հայերէն լեզուով լոյս տեսած ու տեսնող թերթերն ալ հայ մամուլի մատենադիտական ցանկին մէջ ներդրակելու գաղափարին: Անոնցմէ է նաեւ Ա. Տէր Պաշտուրեան, Յովհ. Պետրոսեանի, Ներսէս Գասապեանի, Եղ. Գիւլբէկեանի, Ն. Միքայէլեանի եւ այլոց կողքին: Ուրեմն՝ Ա. Տէր Պաշտուրեանի 1961 թ.ին արտայայտած թիւն ալ ճշգրտութենէ բաւական հեռու է:

Ա. Կիրակոսեանի աշխատասիրութիւնը, ինչպէս տեսանք, կը ներկայանայ որպէս վերջին համահաւաք ցանկը մեր թերթերուն, եւ ըստ որուն, մեր թերթերուն թիւը, մինչեւ 1967 թ.ը եղած է շուրջ 3225: Հոն կան սակայն կրկնութիւններ, անունի փոփոխութենէ յառաջացած շփոթ, յայտարարուած ու չհրատարակուած թերթերու յիշատակում՝ որպէս հրատարակուած, եւ այլ թերութիւններ: Մ. Բաբլոյեանի համաձայն՝ «450 աւելորդ անունների յիրաւի մի ծանր բեռ...» (24):

1970 թ.ին Մ. Մխիթարեանի արտայայտած կարծիքը, թէ հայերէն թերթերու թիւը «վաղուց անցել է երեք հազարից», եւ 1974 թ.ի Ռ. Իշխանեանի ներկայացուցած գումարը՝ 3500, կը հնչեն ամենէն տրամաբանականը արտայայտուած տեսակէտներուն մէջ:

Զարմանալի կարելի է նկատել Մ. Բաբլոյեանի յայտարարութիւնը, որ 1977 թ.ին, ոչ միայն շուրջ 3000 կը դնահատէ հայ պարբերական մամուլի ընդհանուր գումարը, այլեւ խստիւ կը քննադատէ ամէն անոնք, որոնք մինչեւ 4000 եւ աւելի կը նկատեն զայն. «Ամբողջ 1000-1500 անուն թերթ ու ամսագիր կամ այլ պարբերական մեր մատենադիտութեանն անյայտ մնալ ոչ մի դէպքում չէր կարող» (25), կ'եզրակացնէ ան:

Հիմնուելով իր իսկ հաղորդած թիւերուն վրայ, պիտի փորձենք ցոյց տալ, թէ Մ. Բաբլոյեանի յառաջ քշած գումարն ու արտայայտած կարծիքները երբեք չեն համապատասխաներ ճշմարտութեան: Իր իսկ վկայութեամբ, Ա. Կիրակոսեանի յիշատակած շուրջ 3325 անուններէն հարկ է պահսեցնել շուրջ 450 «աւելորդ» անուններ: Ուստի, ըստ Ա. Կիրակոսեանի, նկատի առնելով նաեւ Մ. Բաբլոյեանի սրբագրումները, մինչեւ 1967 թ. ունեցած ենք շուրջ 2875 անուն թերթ: Սակայն, ինչպէս միշտ, նկատի ունենալու ենք թուականը: Մ. Բաբլոյեանի տեսակէտները կը կրեն 1977 թուականը: Այսինքն՝ տասը տարուան միջոց մը կը բաժնէ երկուքին տեսակէտները:

24. Մ. Բաբլոյեան, Աշ. աշխ., էջ 284:

25. Նոյնը, էջ 285:

Այդ առաջ տարիներուն, յատկապէս Միջին Արեւելքի երկիրներէն կատարուած զգալի արտահոսով, ուռճացան այլ դաշութներ, մանաւանդ՝ Ամերիկա, Գանատա, Աւստրալիա, նուազ չափով՝ եւրոպական ու լատին ամերիկեան երկիրներ: Այս տասնամեակին, լիցքաւորուած նոր դաշութներուն, եւ նաեւ Միջին Արեւելքի երկիրներուն մէջ լոյս ընծայուեցան աւելի քան 200 նոր լրագիր ու թերթ, քաղաքական կազմակերպութիւններու, մշակութային, հայրենակցական ու մարդական միութիւններու, հայկական վարժարաններու եւ եկեղեցիներու, ինչպէս նաեւ անհատներու կողմէ: Այդ թերթերէն ոմանք եղան տպագիր, շատեր՝ մեքենագիր բազմազրուած. ոմանք ունեցան կարճատեւ կեանք, հազիւ թիւ մը լոյս տեսած՝ կանգ առին, իսկ ուրիշներ՝ կը շարունակեն գոյատեւել: Մայր հայրենիքէն ներս ալ, նոյն ժամանակաշրջանին, սկսան հրատարակուիլ կարգ մը նոր թերթեր:

Անկախ վերջին տասնամեակին ծնունդ առած նոր թերթերէն, հարկ է դնահատել ուշադրաւ երեւոյթ մը: Ծնորհիւ հայ մամուլով խանդավառ մտաւորականներու եւ բանասէրներու կողմէ կատարուած պրպտումներուն, վերջին տասնամեակին, այսինքն՝ Ա. Կիրակոսեանի կողմէ պատրաստուած համահաւաք ցանկէն ի վեր, յայտնարերուած են շուրջ 300 նոր անուններ (26), որոնք նախապէս պատրաստուած ցանկերէն դուրս կը մնան: Որքան ալ Մ. Բարլոյեանի համար զարմանալի թուի պարագան, սակայն ճշմարտութիւն է թէ երբեմն տարիներով լոյս տեսած թերթեր վրիպած են ուշադրութենէ, եւ հետեւաբար դուրս մնացած են մատենադիտական ցանկերէ: Այս իրողութեան լաւագոյն ապացոյցը կը հանդիսանան հետագայ էջերուն մէջ յիշատակուած բազմաթիւ անունները:

Անցնող տասը տարիներուն լոյս տեսած մասնակի աշխատասիրութիւններ ու ցանկեր զգալի յաւելումներ ներմուծած են, շատ յաճախ ուշադրաւ թերթեր ի յայտ բերած են փոշիներու տակէն, եւ այդպէսով՝ ուռճացուցած են հայ մամուլի քանակը: Նմանօրինակ աշխատանքներ կատարած են, ժամանակագրական կարգով՝ Տիգրան Գէորգեան (27), Եղուարդ Գիւլբէկեան (28), Արտաշէս Տէր Պաշա-

26. Այս թիւին մէջ նկատի առնուած են նաեւ հետագայ էջերուն մէջ յայտնարերուած նոր թերթերը:

27. Տիգրան Գէորգեան, Ժամանակագրութիւն եզրպտոսի Հայ Լրագրութեան, 1865-1966, «Արեւ» օրաթերթ, Գահիրէ, 1970, Մայիսի 11-16, 19:

28. Եղուարդ Գիւլբէկեան, ԽժԲ., Հայկական Մամուլի Ցուցակ (անգլ.), Լոնտոն, 1971:

տուրեան (29), Ժիրայր Դանիէլեան (30), Ն. Միքայէլեան (31), Հայկ Պարիկեան-Յովնան Վարժապետեան (32) եւ Գրիգոր Պողարեան (33) : Առաւել՝ մեր կողմէ յայտնաբերուած են կարգ մը շատ մասնակի ցանկեր, զորս նախապէս ուշադրութեան չեն արժանացած : Հայ մամուլը մատենադիտական ցանկերու պատրաստութեան ժամանակ, եւ զորս օգտագործած ենք հետագայ էջերուն մէջ :

Տակաւին, հայ մամուլով զբաղող բանասէրներու ուշադրութեան պէտք է արժանանայ օտար լեզուներով լոյս տեսած ու տեսնող թերթերու պարագան, որոնց թիւը երբեք արհամարհելի չէ : Վերջին հաշուով, հայերու կողմէ հրատարակուած պարբերաթերթերը, որոնց բովանդակութիւնն ալ եթէ արտացոլացումն է տուեալ շրջանի հայութեան մշակութային ու կենցաղային կեանքին, ոչ միայն կարելի չէ անտեսել, այլեւ, կը խորհինք, անպայմանօրէն հարկ է դանոնք եւս ներգրաւել հայ պարբերական մամուլը հասկացողութեան մէջ, եւ հետեւաբար՝ հայ մամուլի ցանկերուն մէջ, ինչպէս կարգ մը բանասէրներ ըրած են ու կ'ընեն : Այլ խօսքով, այդ օտար լեզուով լոյս տեսնող պարբերաթերթերուն տալ նոյն իրաւունքը, որ բոլորին կողմէ տրուած է հայատառ թրքերէն թերթերուն : Այսպէսով, մի քանի հարիւր անուն եւս կ'աւելնայ հայ պարբերական մամուլի մատենադիտական ցանկերուն վրայ :

Ահա թէ ինչու չենք ուղեր «առասպելական» համարել կարծիքը անոնց, որոնք մեր օրերուն կը համարձակին 4000ի հասցնել ընդհանուր գումարը հայ պարբերաթերթերուն : Ու կը հաւատանք, թէ

29. Արտաչէս Տէր Խաչատուրեան, Լիբանանի Մամուլի Յիսուս Տարիմ, 1921-1971 թթ., «Հայկազեան Հայադիտական Հանդէս», 1971, հտ. 2, էջ 263-290: Սուրբահայ Մամուլի Պատմութիւն, «Հայկազեան Հայադիտական Հանդէս», 1972, հտ. 3, էջ 195-230: Եւ՝ Գիտական-Բնական-Գրախօսութիւն՝ «Հայ Պարբերական Մամուլի Բիբլիոկրափիա», Հեղինակ՝ Յովհ. Պետրոսեան, «Հասկ» ամսագիր, Անթիլիաս, 1973, Մարտ-Ապրիլ, էջ 129-135:

30. Ժիրայր Դանիէլեան, Ակնարկ Լիբանանի Մամուլի Պատմութեան, «Հայկազեան Հայադիտական Հանդէս», հտ. 4, 1973, էջ 237-282: Ժիրայր Դանիէլեան, Ծովակ Ալթունեան, Հայ Մամուլի Հաւաքածոյ (Հայկազեան Գոյէճի Հայադիտական Գրադարանի), Պէյրուս, 1974 (բազմադրուած) :

31. Ն. Միքայէլեան, Նոր Ամուսներ Սփիւրճահայ Մամուլի Պատմութեան Մէջ, «Քանրեր Հայաստանի Արիւններէ», Երեւան, 1973, թիւ 1, էջ 239-248:

32. Հայկ Պարիկեան-Յովնան Վարժապետեան, Պատմութիւն Սուրիոյ Հայ Տպարաններու, Հայէպ, 1973:

33. Գրիգոր Պողարեան, Այնթապականք, Ա. Այնթապցիներու Տուրք Տպագրութեան, Հայ Մամուլիմ, Հայ Գրականութեան եւ Հայ Մշակոյթիմ, Պէյրուս, 1974:

տակաւին կան մութին մէջ մնացած, շյայտնարկուած թերթեր, որոնց պիտի հասնի շարունակուող պրպտումներու լոյսը, ուչ կամ կանուխ: Եւ այն ատեն միայն, յատկապէս հաւաքական ու համադրեալ ճիւղերով, պիտի ունենանք հայ պարբերական մամուլի համահաւաք ցանկը՝ կարելի չափով մօտիկ ճշմարտութեան:

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՆՈՐԱՅԱՅՏ ԱՆՈՒՆՆԵՐ

Վերջին մի քանի տարիներու պրպտումներու արդիւնք է ստորեւ նշուած թերթերու յայտնարերումը: Այս ցանկին պատրաստութեան համար նկատի առնուած են նախապէս հրատարակուած մատենադիտական աշխատասիրութիւնները եւ անոնց հիման վրայ կատարուած յաւելումները՝ զանազան գրախօսականներու եւ յօդուածներու միջոցով:

Յայտնարերուած թերթերու նոր անունները կարելի է բաժնել հիմնական մէկ քանի խումբերու, հիմնուելով անոնց յայտնարերման հետ առնչուող մանրամասնութիւններուն վրայ:

Ա. Առաջին խումբին մէջ կ'իյնան այն բոլոր թերթերը, որոնք յայտնարերուած են ուղղակի մեր կողմէ: Այս պարագային, սկզբնադրիւր կը հանդիսանան նոյնինքն այդ թերթերուն հաւաքածոները, կամ՝ թիւեր: Այսինքն՝ անոնք ներկայացուած են՝ de visu (34):

Բ. Երկրորդ խումբ մը կը կազմեն այն թերթերը, որոնց անձնապէս կարելի չէ եղած հանդիպել, սակայն զանոնք յիշատակող աղբիւրները օգտադործած են խնդրոյ առարկայ թերթերուն նկարները:

Գ. Երրորդ խումբին մաս կը կազմեն շատ մասնակի ցուցակներէ քաղուած թերթեր: Այդ մասնակի ցուցակները յաճախ վրիպած են հայ պարբերական մամուլի մատենադիտութեամբ գրադոյններու ուշադրութենէն:

Դ. Առանձին խումբ մը կը կազմեն այն թերթերը, որոնք յայտնարերուած են կարգ մը անձերու բանաւոր վկայութիւններէն, եւ կամ ալ՝ պատահական յուշագրութիւններէ:

34. Ընդունելով հանգերձ որ ամենէն տոկուն, առարկայական փաստը թերթի մը գոյութեան՝ կը հանդիսանայ թերթը ինքը, սակայն այս փաստն անգամ կարելի չէ բացարձակ ճշմարտութեան վերածել, երբ մանաւանդ թերթին խմբագիրներուն, պատկանելիութեան եւ նմանօրինակ մանրամասնութիւններու հետ առնչուող հարցերով կը դադրինք: Քանի որ, զանազան գրադատաճաններով, յաճախ թերթին կական խմբագիրները մնացած են ծածուկ, անշմար, մինչ յիշատակուած խմբագիրներն ու տնօրէնները եղած են անուանական, եւն.:

դաց Միութեան ամսաթերթ: Մեքենագիր-բաղմադրուած՝ թերթին մէկ երեսին վրայ: 3 էջ: 33×21 սմ.: Մեր տրամադրութեան տակ կան թիւ 45էն (Դ. տարի, թիւ 9, Յունուար, 1958) մինչեւ թիւ 60 (Ե. տարի, թիւ 12, Ապրիլ, 1959) համարները: Հիմնուելով այս տուեալներուն վրայ, կարելի է հետեւցնել թէ «Աղբիւր» սկսած է լոյս տեսնել 1954 թ. Մայիսին:

ԱՂԹԱՄԱՐ (Ախթամար, Գաւաշ, 1904-1907) (37) - Խմորատիպ: Ախթամարի դպրոցի աշակերտներու օրկան: Գաւաշ, Վասպուրական (38):

ԱՄՈՔԻՉ (Վան, 1895) - Խմորատիպ: Խմբագիր՝ Մովսէս Տէր Յովհաննէսեան (ապա՝ սարկաւազ), օգնական-խմբագիր՝ Տիգրան Տէր Յարութիւնեան: Վանի Նորաշէն թաղի Արմենական կուսակցութեան Ամոքիչներ սնունով ծանօթ խումբի հրատարակութիւն (39):

ԱՄՍԱԹԵՐԹ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍՍԻՈՐԻՉ ԵՎԵՂԵՑԻՈՅ (Կրանիթ Սիթի, Իլլինոյ, ԱՄՆ, 1961) - Մեքենագիր բաղմադրուած: Հայերէն-անգլերէն բովանդակութիւն: Խմբագրական կազմ՝ զլխաւորութեամբ՝ Կորին Քէնյ. Շիրիզեանի: Տարուերորդ էջաթիւերով (20, 26 էջ, եւն.): 28×21.5 սմ.:

ԱՄՐՈՑ

ԲԱՏԱՌԻԿ — ԹԻՒ 1

ԼՕՍ ԱՆՃԷԼԸՍ

ՕԳՈՍՏՈՍ 1, 1942

ԱՄՐՈՑ (Լոս Անճելըս, ԱՄՆ, 1942) - Բացառիկ, թիւ 1, Օգոստ-

37. Ծանօթ ուսուցիչ Նշան Յովհաննէսեան կը գրէ. «Քսաներորդ դարու սկզբրեան կան շրջանին եթէ Վասպուրականցուն կը պահուէր երկաթ մամուլը, անոր տեղ բռնեց խմորատիպ մամուլը, եւ ահա 1904-1907 շրջանին մենք կը հանդիպինք ասանեակ մը խմորատիպ լրագրիներու եւ ազգարարագիրներու»: (Տես՝ Ն. Յովհաննէսեան, Վասպուրական Հայ Լրագրութեան Մէջ, «Արծուի Վասպուրական», Դ. տարի, 1955, թիւ 14, էջ 307): Հակառակ իր «տասնեակ մը...» հաստատումին, Ն. Յովհաննէսեան կը յիշատակէ միայն 6 անուն, առանց տալու իւրաքանչիւրին հրատարակութեան թուականն ու տեւողութիւնը: Կը զոհանայ զանոնք զետեղելով 1904-1907 թթ. ուն մէջ:

38. Ե. Տէր Մկրտիչեան, Բշ. աշխ., էջ 618:

39. Նոյնը, էջ 618:

տոս 1, 1942: 68 էջ: 25×17 սմ.: Հրատարակութիւն «Արեւմտահայ Ազատագրական Ուխտ»ի: Տպարան «Պօղարթ»: Խմբագրուած է «Հրատարակիչ Մարմին»ի կողմէ: «Հրատարակիչ Մարմին»ի խօսքէն, խմբագրականէն անկախ կան արտատպումներ եւ ինքնազիր յօդուածներ վաղդէն Շուշանեանէ, Յովհ. Թումանեանէ, Շահան Նաթալիէ, Ռուբէն Զարդարեանէ, Մկրտիչ Երեցանցէ, Հայ Գնդունիէ, Զօր Սմբատէ, Փրոֆ. Տ. Կ. Լիւլէճեանէ, եւն: Բովանդակութիւնը կը կազմեն ընդհանրապէս գրական-գեղարուեստական յօդուածներ:



ԱՆԱՀԻՏ (Սիվրի-Հիսար, 1911) – Այս խմորատիպ թերթին մասին առաջին անգամ ըլլալով կը խօսի Թէոդիկ. «... Սիվրի-Հիսարի Անահիտը՝ 1909-ին հիմնուած բժիշկ եւ ուսուցիչ մտաւորականներէ (այժմ դադարած)» (40): Այլ յիշատակութիւն մը կայ Ա. Ալպոյաճեանի մօտ. ան կը նշէ թերթին անունը, տպագրութեան վայրը եւ թուականը՝ 1909 (41): Այնպէս կը թուի, թէ վերոյիշեալ մտաւորականները չեն տեսած «Անահիտ»ը, քանի որ անոր Ա. տարուան առաջին թիւը լոյս տեսած է 1911 թ.ի Յունուարի 2ին: Ճիշդ է որ խմբագիրները եղած են ուսուցիչ եւ բժիշկ մտաւորականներ: Առաջինը անոնցմէ՝ Տոքթ. Միհրան Ներսէսեանն է (ծն. 1899 թ.ին), որ ծննդավայրի Ներսէսեան Ազգ. վարժարանին ընթացքը աւարտելէ ետք, եօթը տարի, մինչեւ 1913 թ.ը, նոյն վարժարանին մէջ կը սլաշտօնավարէ որպէս ուսուցիչ: Այս շրջանին է որ կը հրատարակէ «Անահիտ» չարաթաթերթը, Տոքթ. Սուրէն Նշանեանի դործակցութեամբ: Այս վերջինը՝ 1909 թ.ին որպէս բժիշկ վկայուելէ ետք Պէյրութի Ֆրանսական համալ-

40. Թէոդիկ, Տիպ ու Տստ, Կ. Պոլս, [1913], էջ 143:

41. [A. Alboyadjian], Les Arméniens et l'Imprimerie, Constantinople՝ 1920. Տես նաև՝ Ա. Ալպոյաճեան, Հայերը եւ Տպագրութիւնը, «Հայրենիք» ամսագիր, Ժ. տարի, թիւ 10 (Օգոստոս, 1932), էջ 137:

սարանէն; կը պաշտօնավարէ Պոլսոյ Ս. Փրկիչ Այլ. հիւանդանոցին մէջ, եւ ուր կը մտնէ Հ. Յ. Դ. ի շարքերը: Այս կ'անցնի Սիվրի Հիւսար, քաղաքապետական բժիշկի պաշտօնով: Հոն կ'ուսննայ ազգային, հասարակական ու կրթական գործունէութիւն (42):

ԱՊԱԳԱՅ (Ֆիլիպէ, 1917) – Ա. Աշխարհամարտի ընթացքին, Ֆիլիպէի մէջ, հրատարակուած է «Ապաղայ» անունով ձեռագիր հանդէս մը: Այս լուրը, զոր կը հաղորդէ Կ. Պոլսոյ «Շանթ»-ը, կ'աւելցնէ. «Այս հանդէսէն կը քաղենք հետեւեալ երկու անտիպ քերթուածները: Տէվէճեան ծանօթ է մեր ընթերցողներուն: Լաւապոյն նորերէն է ան»: Այս մուտքէն ետք, կը տրուին զոյգ բանաստեղծութիւնները. առաջինը՝ Յովհ. Տէվէճեանի ստորագրութիւնը կրող «Ուաչէ ի Ուաչ»-ը, երկրորդը՝ Վ. Արծրունիի «1918 խաղաղութիւն»-ը: Երկրորդ քերթուածը գրուած է 1917 թ. ի Դեկտեմբերի 25ին, պարապայ մը, որ մտածել կուտայ թէ «Ապաղայ»-ն լոյս է տեսած մօտաւորապէս 1917–18 թթ. ուն (43):

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ (Լենինական, 1929–30) – Ձեռագիր: Օրկան «գրական խմբակ»ի, որուն կ'անդամակցէին Արտեմ Շահրապ, Հր. Նայիրենց, Յակոբ Բրուտ, Ղեւոնդ Կոմունի, Վազգէն Զանգակ եւ Ազանի: Խմբակի ղեկավար՝ Գեղամ Սարեան (44):

ԱՍՈՒՊ (Տիգրանակերտ, 1910) – Խմորատիպ: Հրատարակութիւն Տիգրանակերտի Հնչակեան Գրասիրաց Միութեան, որ կազմուած է Յարութիւն Թոնամեանի ջանքերով: Խմբագիր՝ Յակոբ Ղաղիկեան: Հնչակեան գործիչ Սեդրակ Շահէն կը յայտնէ, թէ «Ասուպ»-ը հրատարակուեցաւ հակազդելու համար տեղւոյն Դաշնակցական Երիտասարդական Կաճառի հրատարակած «Ազատ Սէր» (45) անունով թերթին, որ կը խախտէր «հայկական տոհմային սրբութիւնները, սէրը ցոփութեան հասցնելու իրողութեամբ» (46): Այլ մանրամասնութիւններ

42. Տես՝ Գրեգոր Տէր Յովհաննէսեան, Պատմագիրք Սիվրի-Հիսարի Հայոց, Պէյրուս, 1965, էջ 18, 309–310:

43. Տես՝ «Շանթ» շարաթաթերթ, Կ. Պոլիս, Դ. տարի, թիւ 30 (24 Մայիս, 1919), էջ 345:

44. Տես՝ Աղանի, Որն է Բանաստեղծը [Պօք՝ ասուած Գեղամ Սարեանի 25-ամեակի օրը], «Անի» ամսագիր, Պէյրուս, 1946, թիւ 1, էջ 44:

45. Ս. Շահէն շատ հաւանարար կը շփոթէ թերթին անունը թերթին բովանդակութեան հետ: Քանի որ նոյն շրջանին Տիգրանակերտի Հ. Յ. Դաշնակցութեան հրատարակութիւնն էր խմորատիպ «Տիգրիս»-ը, Վահան Տէպղաղեանի խմբագրութեամբ:

46. Ս. Շահէն, Յուշեր եւ Փուշեր կեանքի ձանապարհիմ, Պէյրուս, 1975, էջ

կը պահպին: Հնչակեան թերթի մը մասին վկայութիւն ունի Արսէն Տէպաղեան: Անդրադառնալով վերոյիշեալ Գրասիրաց Միութեան դործունէութեան, ի մէջ այլոց, ան կը գրէ. «Որոշուած էր հրատարակել խմորատիպ, միջակ ծաւալով ամսաթերթ մը» (47): Ծառ հաւանարար ակնարկութիւնը «Ասուպ»ին կը վերաբերի:

ԱՍՊԱՐԷՉ (Պարբերդ, 1891) – խմորատիպ: Հիմնադիր-խմբագիր՝ րանաստեղծ Գարեգին Պէշկէօթիւրեան, ուսանող, ապա՝ ուսուցիչ (1887 թ. էն սկսեալ) Պարբերդի Եփրատ Գոլէճի, ուր եւ կը հրատարակէր «Ասպարէզ»ը: Եփրատ Գոլէճի այլ շրջանաւարտ մը՝ Ռուբէն Որբերեան, Կ. Սողիկեանի (48) քրոջ ուղղուած նամակի մը մէջ, ի մէջ այլոց, կը գրէ. «... «Ասպարէզ»ը հիմնած էր Սրիմգի անմահ Գարեգինը: Անկէ անցաւ պաշտելի եղբորդ եւ Հայկակին (Պապոյեան), որոնցմէ ես զայն ժառանգեցի. մինչեւ վերջը սակայն երկուքն ալ հաստարիմ աշխատակիցներս եղան, տաղանդաւոր Պորէնին հետ (Անդրէասեան): «Ասպարէզ»ը Եփրատի դրական մրցարանն էր» (49):

Որպէս «Ասպարէզ»ի հրատարակութեան սկիզբ կը տրուի 1891 թ.ը (50): Անհաւանական չէ որ սկսած ըլլայ աւելի կանուխ, քանի որ Գ. Պէշկէօթիւրեան, երկար ժամանակ հիւծախտէ տառապելէ ետք, կը մահանայ 1891 թ.ի Յունիսին: Թերթը կ'անցնի Սողիկեանին (1890 թ.ի շրջանաւարտ) եւ ապա՝ Ռուբէն Որբերեանին, որ 1893 թ.ի Յունիսին կ'աւարտէ Եփրատ Գոլէճի շրջանը եւ կը հեռանայ Պարբերդէն (51): Գարեգի է հետեւցնել որ «Ասպարէզ»ը դոյատեւած է մինչեւ 1893 թ.:

Գրականապէս Վ. Գարբիէլեան կը յայտնէ թէ Գ. Պէշկէօթիւրեան Եփրատ Գոլէճի մէջ կը պաշտօնավարէ 1887–1891 թթ.ուն, եւ այդ տարիներուն կը հրատարակէ «Ասպարէզ» խմորատիպ ամսաթերթը,

47. Արսէն Տէպաղեան, Հնչակեան կուսակցութիւնը Տիգրանակերտի Մէջ, Տես՝ Տիգրան Մկրտչի, «Ամիտայի Արձագանգներու Վերակոչումն եւ Բ. Հատոր», 1953, էջ 286:

48. Կարապետ Սողիկեան՝ Եփրատ Գոլէճի փայլուն շրջանաւարտներէն, ապա՝ նոյն գոլէճի հայերէն լեզուի, դրականութեան եւ տարբարանութեան ուսուցիչ, որ 1900 թ.ին կը հրատարակէ նոյն հաստատութեան «Եփրատ» կիսամեան (1900–1913 թթ.):

49. Յարէթ Մ. Փիլիպոսեան, խմբ., Յիշատակարան Եփրատ Գոլէճի, Պոսթոն, էջ 301:

50. Նոյնը, էջ 303: Նաեւ՝ Մանուկ Գ. Ճիգմէճեան, Խարբերդ եւ իր Զաւակները, Ֆրէզնօ, 1955, էջ 138:

51. Ռուբէն Որբերեան, իմ Առաջիմ Հրատարակութիւնս, «Մասիս», Կ. Պոլիս, 1900, թիւ 8, էջ 116–117:

«որն ունէր հայրենասիրական շեշտուած ուղղութիւն՝ շնայած այդ օրերի ազգային հայրածանցներին ու ճեշումներին» (52) : Նման հաստատում մը ընելու համար, ենթական առ նուազը տեսած ըլլալու է «Ասպարէզ»ի կարգ մը համարները, եւ կամ՝ ձեռք ձգած հաւաստի որոշ ազդիւրներ : Երկուքէն ոչ մէկուն յիշատակութիւնը կը գտնենք Գարբիէլեանի աշխատանքին մէջ :

ԱՐԱՐԱՏ (Նիւ Եորք, 1902) – Ամսաթերթ : Խմբագրի՝ Փանոսակ Մ. Այվատեան (53) : Լոյս տեսած միայն 2 թիւ (54) :

ԱՐԵՒԱԿ (Բալու, 1862) – Թէոզիկ կը դրէ. «...Չեմ կրնար անյիշատակ անցնիլ ԲԱՒՈՒԻ Քաղցրահայեաց Ս. Աստուածածին վանուց վրայէն, ուր Մկրտիչ Եպսկ. հաստատած էր վիմագրատուն–տպարան մը, որ լոյս ընծայած է քանի մը թուուցիկ եւ ԱՐԵՒԱԿ թերթը : Գրաշարապետ էր հոն Տիգր. Մանալեան» (55) : Թէոզիկ «Արեւակ»ի մասին այլ մանրամասնութիւններ չի հաղորդեր :

Մկրտիչ Եպս.ը՝ Մկրտիչ Վրդ. Տիգրանեանն է, տիրապէջիրցի, որ 1860–1863 թթ.ուն եղած է Բալուի առաջնորդը, որ 1862 թ.ին վերոյիշեալ վանքին մէջ նախնական տպարան մը կը հիմնէ : Պոլլիսէն Բալու կը տանի երկու պատանիներ՝ Տիգրան Մանալեան եւ Աւետիս Սուրէնեան : Այս պատանիները կը հրատարակեն «Արեւակ» անունով «դրեթէ տղայական թերթ մը» (56) :

ԱՐՁԱԳԱՆԳ (Մոնթէվիտէօ, 1955) – Հայ Օղնութեան Միութեան Արժուիկներու Ձայնը : Մեքենագիր բազմազրուած : Ա. տարուան առաջին թիւը լոյս տեսած է 1955 թ.ի Դեկտեմբերին : 10 էջ : 22.5 × 17.5 սմ. : Բովանդակութիւն՝ հայերէն եւ սպաներէն :

ԱՐՁԱԳԱՆԳ ՄՕՏԱԾԻ (Կ. Պոլլիս, 1901) – Խմբագրատիպ : Վենետիկի Միսիթարեան միարանութեան Գատրգիւղի (Քաղկեդոն) միջնակարգ վարժարանի թերթ : Խմբագրատիպ այս թերթը ուշադրաւ է անոր համար որ պատանի Դանիէլ Վարուժան (աշակերտ նոյն վարժարանին՝ 1898–1902 թթ.) իր նախափորձերը հոն հրատարակած է : Մեր օգտագործած ազբիւրը կը յիշատակէ այդ թերթին երեք հա-

52. Վազգէն Գարբիէլեան, Արեւմտեայ Բանաստեղծներ, Երեւան, 1974, էջ 18 :

53. Փ. Այվատեան, 1891–92 թթ.ուն Նիւ Եորքի մէջ հրատարակած է «Արաբաս» անունով թերթ մը, որ նախ երկչարաթաթերթ, ապա՝ շարաթաթերթ եղած է :

54. Ա. Այոյօյակեան, Պատմութիւն Հայ կեսարիոյ, Բ. հար., Գահերէ, 1937, էջ 2040 :

55. Թէոզիկ, Տիպ ու Տառ, էջ 134 :

56. Վահէ Հայկ, Առաջնորդութիւն եւ առաջնորդներ, տես՝ Մկրտիչ Կոստան, Բալու, Անթիլիաս, 1965, էջ 178 :

մարները (1901 թ.ի թիւ 6, 9 եւ 10), որոնց մէջ ստորադրած է Դանիէլ Վարուժան, առաջինը՝ Դ. Զրպուզկեոեան, երկրորդը՝ Դ. Զուպուզկեոեան եւ երրորդը՝ Դ. Զպուզկեոեան անուններով (56ա) :

ԱՐՐՐ (Կ. Պոլիս, 1899) – 1899 թ.ի Նոյեմբերի 11-ին Յակոբ Տէր Յակոբեան կը ձեռնարկէ «Արոր»ի հրատարակութեան : Նմազըրութիւնը կը վստահուի Արշակ Ալպոյաճեանի : Եղած է ձեռագիր : Այս մանրամասնութիւնները կու տայ խմբագիրը ինք եւ կ'աւելցնէ նաեւ, թէ «Գեղօն» անունով այլ ձեռագիր թերթ մըն ալ լոյս տեսած է իր խմբագրութեամբ, նոյն շրջանին (57) :

Իմ տիր խմբում
J. G. BARSUMIAN
18, Rue du Dr. Rebatel
Lyon (France)

Թերթն պէտքերն պատահի
ստրեւէ իրայր բէն օգնուոր :

ԲԱՆԲԵՐ

ԲՈՒՀԱՆԻ ԱՅԼԸԳ ՂԱՋԷԹԱ
ՀԷՐ ԳԷՍ ԻԶԻՆ

Մանագլխի պուտան,
կանի Գրիտու զեւոի ձանք
Նր կարմրա փետու կեօտին
տէն պիտիք : Ա. Յովհ. 3. 16 :
Կի շին հայրմաս օտար
Լոյսէր սրտարտու սրտ
յորտրոյ, սրտարտու տէրի
տիր, ամնա գրամ էթտի :
Ղուկ. 24. 5. 6 :

Արձան պատկեր կրօնիկն գրամը ին Ֆրանսա վե Սուրիս՝ 10 Ֆր. Պայտանար 50 սենթ վե տիւեր տիրար 50 սենթ տիր

Նօմ. 3

ՃԻՏ 6

ՄԱՅԻՍ 1950

ԲԱՆԲԵՐ (Լիոն, 1925) – Բուհանի այլըզ գագէթա հէր քէս իշիւն (Հոգեւոր ամսաթերթ ամէնուն համար, Ժ. Դ.) : Ֆրանսայի Հայ Աւետ. եկեղեցւոյ հրատարակութիւն : Պէտք է շփոթել հայերէն լեզուով լոյս տեսնող Մարտէյլի «Բանբեր»ին հետ, հակառակ որ նոյն եկեղեցիին հրատարակութիւնը կը հանդիսանան երկուքն ալ : Հայատառ թրքերէն «Բանբեր»ը լոյս ընծայուած է որպէս «յաւելուած» հայերէնով լոյս տեսնող «Բանբեր»ին :

Հայ պարբերական մամուլի մատենագիտական աշխատասիրութիւններուն մէջ շփոթ կայ : Նոյնացած են այս երկու անջատ թերթը : Յ. Պետրոսեան կը գրէ. «Այս կրօնական ամսագիրը տպագրուել է երկու լեզուով՝ հայերէն եւ տաճկերէն» (58) : Ա. Կիրակոսեան, շատ հաւանաբար իր տեղեկութիւնները քաղելով առաջինէն, կը գրէ. «Տեքստը հայերէն եւ թուրքերէն» (59) : Մինչդեռ, հայատառ թրքերէնով լոյս տեսած «Բանբեր»ը իր բովանդակութեամբ, էջաթիւն-

56ա. Տես՝ «Բաղմալէպ», 1936, էջ 401 :

57. Ա. Ալպոյաճեան, Անցեալի Յիշատակներ, «Ջահակի» (Գահիբէ), Նոր շրջան, թիւ 36 (16 Յուլիս, 1964), էջ 3 : Ալպոյաճեանի «Անցեալի Յիշատակներ»ը գրի առնուած է 1900 թ.ի Մայիսի 8-16, եւ որպէս անտիպ լոյս տեսած՝ «Ջահակի»-ի մէջ, 1964 թ.ի 35րդ համարէն սկսեալ :

58. Յովհ. Պետրոսեան, Հայ Պարբերական..., հտր. 2, Երևան, 1957, էջ 397 :

59. Ա. Կիրակոսեան, Աշ. աշխ., էջ 233 :

րով, խմբագիրով, պատասխանատու տնօրէնով, հասցէով, հիմնականապէս կը տարբերի հայերէնով լոյս տեսնող «Բանբեր»էն: Նախ՝ բուրովին անջատ թերթ է, անջատ կողքի տակ: Էջաթիւը մնայուն կերպով եղած է 8, մինչդեռ հայերէնով լոյս տեսնող «Բանբեր»ինը տարուերած է 8ի, 12ի եւ 16ի միջեւ: Բովանդակութիւնը մնայուն կերպով տարբեր եղած է, աշխատակիցները՝ նմանապէս: Պատասխանատու տնօրէնը՝ Ժօզէֆ Կ. Պարսումեան, խմբագիրը՝ Լեւոն պիրատէր Նիկողոսեան: Պարսումեան հասցէն՝ Լիոն, Ֆրանսա: Շատ հաւանաբար տպագրութիւնը կատարուած է նոյն տպարանին մէջ, Մարսէյլ: Տեղագրութիւնը՝ 13 տարի, 1925 թ.էն մինչեւ 1937 թ.ի Դեկտեմբեր ամիսը, տարին 12 թիւ: Մինչդեռ հայերէնով լոյս տեսնող «Բանբեր»ը կը դոյատեւէ խմբագրական կազմի ու ծաւալի փոփոխութիւններով: Հայատառ թրքերէնով լոյս տեսած «Բանբեր»ին դադրեցման պատճառները երկուք են. նախ՝ խմբագրին անհանգստութեան պատճառով աշխատանքէ քաշուիլը, երկրորդ՝ տնտեսական, որ իր կարգին արդիւնք է թրքախօս բաժանորդներու տարուէ-տարի նուազելուն եւ հայախօս բաժանորդներու աւելնալուն (60):

ԲԱՐԵԳՈՒՇԱԿ ԱՍՏՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ (Թիֆլիս, 1860) – իմաստիպ: Հրատ. Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի: Բովանդակութիւնը կ'կազմեն կրօնական եւ հայրենասիրական յօդուածներ, մեծ մասով աշխարհաբար (61):

ԲԻԻԼԵՏՏԵՆ (Երեւան, 1922) – Օրկան «Երեք»ի (Եղիշէ Չարենց, Ազատ Վշտունի, Գէորգ Արով): Լոյս տեսած՝ երեք համար: «Բիւլետեն»ը շարեր ու տպագրեր են վահրամ Ալազանն ու իր աշխատանքի ընկերները, աշխատանքի ժամերէն դուրս: Ալազան՝ այդ օրերուն «Պորհրդային Հայաստան» թերթի դրաշարներէն եղած է: Ըստ Ալազանի՝ «Բիւլետեն»ը «Պորհրդային Հայաստան»ի ծաւալից փոքր, չորս էջանոց մի թերթ էր: Առաջին անգամ էի տեսնում այսպիսի մի թերթ, որն սկզբից մինչեւ վերջ լցուած էր բանաստեղծութիւններով, ըստ որում՝ երկուական բանաստեղծութիւն Չարենցից, երկուական Վշտունուց եւ երկուական Արովից» (62): «Երեք»էն Գ. Արովը, Չարենցի նուիրուած իր յուշերուն մէջ (63) կը յայտնէ, թէ լոյս տեսած են «Ե-

60. «Բանբեր», ձիւտ 13, 1937, թիւ 12 (Դեկտեմբեր), էջ 89:

61. Աւետիք Չանջուղազեան, Ներսիսեան Դպրոցի Աշակերտական Մամուլը, տես՝ Դանիէլ Դոնուսի, խմբ., Հայ Մշակոյթի Օրբանը, Երեւան, 1971, էջ 52:

62. Վ. Ալազան, Անշափելի Մեծութիւն, տես՝ Յիշողութիւններ Սիյշէ Չարենցի Մասին (Չարենցի Հիտ), Երեւան, 1961, էջ 239-242:

63. Գ. Արով, Մի Բառի Համառօտ Դրուագներ Չարենցի Վերաբերեալ Իմ Յուշերից, տես՝ Յիշողութիւններ..., էջ 126-127:

րեք»ի բիւլետենի երկու համարներ (64) : Գուրգէն Մահարին, նոյն թուականներու Չարենցի համակիր երիտասարդ բանաստեղծներէն, կը դրէ. «Երեք»ի բիւլետենները : Թւով երեք» : Ինչպէս նաեւ կու տայ Չարենցի զոյգ քերթուածներէ տողեր, շատ հաւանաբար առաջին թիւին մէջ լոյս տեսած (65) :

«Բիւլետեն»ի հրատարակութիւնը կը դադարի «Երեք»ի ցրուումով :

ԳԱՐՈՒՆ (Կ. Պոլիս, 1892-94) - Պէրպէրեան վարժարանին մէջ, Չարեն Մանավազեանի կողմէ «հրատարակուած» : Սկիզբը ձեռագիր, ապա՝ բազմագրուած (66) :

ԳԱՒԱՌԻ ՉԱՅՆ (Վան) - Խմորատիպ (67) :

ԳՐՇՂԱ (Եանիս, Եպիրոս, 1912) - Չեռագիր : Խմբագիր՝ Եպիրոս գտնուող օսմանեան բանակի հայ ղինուորներէն մէկը : Թերթը ուղղուած է իր հայրենակիցներուն եւ դէնքի ընկերներուն (68) : Այլ մանրամասնութիւններ կը պակսին :

ԳՐԱԿԱՆ ՀՈՒՆՁՔ

Պ ա ր ք ե ր ա ք ե ր ք

Ա. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ, 1943

ԹԻԻ 1

ԳՐԱԿԱՆ ՀՈՒՆՁՔ (Ֆիլատելֆիա, ԱՄՆ, 1943) - Պարբերաթերթ : Ֆիլատելֆիահայ Գրական Միութեան Հրատարակչական Մարմնի հրատարակութիւն : 32 էջ : 28·5×21 սմ. : Թիւ 1, Ա. տարի, Օգոստոս 1943 : Տեղական աշխատակցութեան կողքին (Ե. Տիրան Էօմիւրեան, Հայկաղուն եւ Գրիգոր Թաթարեան, Յակոբ Գուլումճեան, Իսախան Պաշիկեան), արտատպումներ կան հայրենի զրոգներ Ստ. Զօր-

64. Վ. Ալղանն ու Գ. Մահարին (Տես՝ ծանօթ. թիւ 65) կը յայտնեն թէ երեք համար լոյս տեսած է :

65. Գ. Մահարի, Չարենց-Նամէ, Երեւան, 1968, էջ 32 : Նաեւ՝ Յիշողութիւններ... էջ 160-161 :

66. Ա. Ալղոյաճեան, Անցեալի Յիշատակներ, «Ջահակի», թիւ 35 (9 Յուլիս, 1964), էջ 3 :

67. Եր. Տէր Մկրտիչեան, Ոչ. աշխ., էջ 622 :

68. [A. Alboyadjian], Les Arméniens et l'Imprimerie. Նաեւ տես՝ Ա. Ալղոյաճեան, Հայերը... «Հայրենիք» ամսագիր, Ժ. տարի, թիւ 10 (Օգոստոս, 1932), էջ 137 :

եանէ, Ազատ Վշտունիէ, Սաչիկ Դաշտենցէ, Գ. Յովնանէ, Աւետիգ Իսահակեանէ, Սողոմոն Տարօնցիէ :

ԳՐԱՄԷՐ (Լաոնաքա, Կիպրոս, 1923) – Խմորատիպ շաբաթաթերթ: Լոյս ընծայուած է Լաոնաքայի «Հայ Գրասիրաց Միութեան» կողմէ, 1923 թ.էն սկսեալ: Խմբագրական աշխատանքներու մէջ բաժին ունեցած են՝ Գէորդ Չաքմաճեան, Յակոբ Գույումճեան եւ Կիրակոս Կէօքաչեան: Թերթը զոյատեւած է երկու տարի (69) :

ԳՐԻՉ (Տէօրթ–Եոլ, 1914–1915) – Խմորատիպ: Լոյս տեսնել սկսած է 1914 թ.ի Դեկտեմբերին: Երկու կամ երեք թիւ ետք, 1915 թ.ի Յունուարին՝ դադրած: 8 էջ: Խմբագիրը եղած է տեղւոյն Կեղրոնական Բարձրագոյն վարժարանի ուսուցիչներէն Արտաշէս Տէր Գէորգեան: Այդ օրերուն լոյս տեսած Դ. Վարուժանի եւ Յ. Ճ. Սիրուհիի «Նաւասարդ» տարեգիրքի կողքի նկարը ընդօրինակուած է Մինաս Ասիմեանի կողմէ, եւ նկարին վրայ «Գրիչ» անունը աւելցնելով՝ դարձած է «Գրիչ»ի կողքը (70) :

ԴԱԼԱՐԻՔ (Կ. Պոլիս, 1960) – Հանդէս Նշիլդիւղի ազգային նախակրթարանի աշակերտութեան: Խմբագրութեամբ Ե. դասարանի աշակերտութեան: Սկսած է ձեռագիր: Երբ վարժարանին նուիրուած է բազմադրոյ մեքենայ, Բ. տարուան առաջին թիւէն (Յունուար, 1961) «Իսլաբիք»ը սկսած է լոյս տեսնել ձեռագիր–բազմադրուած: Աշակերտական դրութիւններ, նկարներ եւ դպրոցին վերաբերեալ տեղեկութիւններ կը բովանդակէ: Բ. տարուան առաջին թիւը կը բաղկանայ 14 էջերէ: 31×22 սմ.:

ԴԱՐՄԱՆ (Պարտիզակ, 1895–96) – Խմորատիպ: Հրատարակութիւն Պարտիզակի Հնչակեան մասնաճիւղի: Ընդյատակեայ, դադտնի թերթ եղած է: Չաղկած է զիւղին վաշխառուները: Կարճատեւ կեանք ունեցած է: Գործածած է հետեւեալ հասցէն. «Վերի Արտեր, Անել փողոց, Չէզոքեան խան, թիւ 17, Պարտիզակ» (71) :

ԴԵՐԱՄԱՆ (Կ. Պոլիս, 1896–99) – Ձեռագիր: Խմբագիր՝ Եղուարդ Գօլանճեան (ծն. 1880 թ.): Գօլանճեան, Պէրպէրեան վարժա-

69. Տես՝ ԲԱԿ [Բարբէն Արքեպօ. Կիւլէսէրեան], Հայ-Կիպրոս. Հայ Գաղութը եւ Ս. Մակար, Անթիլիաս, 1936, էջ 119:

70. Տեղեկութիւնները քաղուած են խմբագիր Ա. Տէր-Գէորգեանէն: Ըստ խմբագիրին՝ «Գրիչ»ի լոյս ընծայումը խթան հանդիսացած է որ նոյն վարժարանի ուսուցիչ Միհրան Տէր Ստեփանեան, ավակցութեամբ տնօրէն Մարտիրոս Տէր Ստեփանեանի, հրատարակէ խմորատիպ այլ թերթ մը՝ «Նուիկ»ը (տես՝ «Նուիկ»):

71. Տես՝ Յակոբ Տէր-Յակոբեան, Պարտիզակը Խատուտիկ, Փարիզ, 1960, էջ

րանի բարձրագոյն կարգերուն մէջ (Գ-Ե) Հրատարակած է 2 ձեռագիր հանդէսներ՝ «Պսակ» եւ «Դերասան» անուններով: Երկրորդը՝ «լի պատմ. թատերգութիւններով», զորս իր արձակուրդներուն Գօլանձեան կը ներկայացնէ դասակիցներու հետ: (72):

ԵՐԿԻՐ (Մանչուրիա, 1919) – Ամսաթերթ: Խմորատիպ: Խմբագիր՝ Մելիք-Շահ (Արմենակ Մելիքեան) (73), որ ուսական յեղափոխութեան օրերուն Կովկասէն կ'անցնի Սիպերիա, ուր Հ. Պսակեանի հետ, լոյս կ'ընծայէ «Երկիր»ը՝ 1919 թ.ին: Թերթին տեղափոխուելը յայտնի չէ: Սակայն ծանօթ է որ Մելիք-Շահ 1920 թ.ին կը գտնուի Ֆրեդնո (74): Ըստ այլ տեղեկութեան մը, ան Մանչուրիոյ մէջ կը Հրատարակէ նաեւ «Արչալոյս տարեգիրքը (75):

ԵՐԿՈՒՆՔ (Վան) – Խմորատիպ (76):

ԵՓՐԱՏ (Ակն, 1873) – Ձեռագիր շարաթատերթ (77): Ակնի աւետարանականներու Հրատարակութիւն: Մարտիրոս պատուելի Իդնատուեանի թելադրութեամբ՝ Ա. Ն. Թոթլայեան Հրատարակած է

72. Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, 1910, էջ 163:

73. Արմենակ Մելիքեան ծնած է 1888 թ.ին, Երզնկա: Եղած է ուսուցիչ, խմբագիր, կուսակցական գործիչ: 1909 թ.ին, Երզնկայի մէջ Հրատարակած է «Աբօր» ամսագիրը, 8 թիւ, խմորատիպ, ապա՝ տպագիր (2 թիւ՝ Տրպալդոն, ապա՝ կանոնադրարար Կարինի «Յառաջ» թերթի տպարանէն լոյս տեսած): Աշխատակցած է Ռ. Զարգարեանի «Աղատամարտ»ին, Փարիզի «Յառաջ»ին, Պոսթոնի «Հայրենիք»ին, Տիէզնոյի «Ասպարէզ»ին, որուն խմբագրութիւնը վարած է 1940–1952 թթ.ուն: Ա. Մելիքեանի մասին տես՝ Գ. Միւրմէնեան, Երզնկա, Գահիրէ, 1974, էջ 207, 470–471, եւ «Ասպարէզ. Յիսնամեակ, 1908–1958», Ֆրէզնո, 1958, էջ 222–223:

74. «Ասպարէզ. Յիսնամեակ, 1918–1958», Ֆրէզնո, 1958, էջ 223:


75. Ա. Կիրակոսեան «Արչալոյս» տարեգիրքին համար կու տայ հետեւեալ ծանուցումը: «Ֆրէզնո (Կալիֆորնիա), տպ. «Ասպարէզ», 1919–1922... Կազմեց՝ Արմենակ Մելիքեան» (տես՝ Ա. Կիրակոսեան, Բշ. աշխ., էջ 225): Մինչեւ, Արմենակ Մելիքեանի ողջութեան, նոյն տպարանէն լոյս տեսած «Ասպարէզ»ի յիսնամեակին նուիրուած բացառիկ հատորին մէջ կ'ըսուի, թէ կրեք հատորներէ բաղկացած այդ տարեգիրքին առաջինը լոյս տեսած է Մանչուրիա (տես՝ «Ասպարէզ...», էջ 223): Նկատի ունենալով որ Մանչուրիոյ մէջ գործող տպարան չէ եղած, ինչպէս նաեւ ծանօթ մատենադարաններու մէջ կարելի չեղաւ գտնել «Արչալոյս» տարեգիրքի Ա. հատորը, կը փորձուինք մտածել որ Ա. Մելիքեան, Մանչուրիոյ մէջ, զայն Հրատարակած է խմորատիպ:

76. Եր. Տէր Մկրտիչեան, Բշ. աշխ., էջ 622:

77. Մեր կարծիքով, այս եւ Ակնայ մէջ լոյս տեսած «Մարտիկ»ն ու «Մարակ»ը խմորատիպ թերթեր եղած ըլլալու են:

դայն (78) : Հրատարակութեան սկզբնաւորութեան կամ տեւողութեան մասին յիշատակութիւն չկայ : Սակայն, ժամանակակից ըլլալու է Ակնայ միւս թերթին՝ Ուսումնասիրական Ընկերութեան Հրատարակածին (79), քանի որ «Բողոքականներուն թերթը կը սկսի պայքարիլ Ծաղիկին դէմ» (80) : Այս վերջինը լոյս տեսած է 1872-73 թթ.ուն :

ՁԱՐԹՕՆԲ (Կ. Պոլիս, 1908) – Խմորատիպ ամսագիր : Խմբագրական կազմ՝ Գուրգէն Մխիթարեան, Մանուկ Ասլանեան, Ա. Վանարեան, Հմ. Մանուկեան, Կարօ Սասունի : Սահմանադրութենէն ետք, դաւաններէն Պոլիս ինկած 18-20 տարեկան տղաք, որոնք կ'արձանագրուին տեղւոյն Կեդրոնական վարժարանը, յատուկ դասարան մը կազմելով՝ մէկ տարուան համար : Այս տղոցմէ դբական, մտաւորական շնորհ ունեցողներն են որ կը սկսին հրատարակել «Ձարթօնք»ը, 1908 թ.ի վերջերուն : 6 թիւ լոյս կը տեսնէ : Արդէն, կարճ ժամանակ ետք, վերսյիշեալներէն ոմանք պիտի հրատարակէին «Երկունք» ամսագիրը՝ օրկան Հ. Յ. Դ. ուսանողական միութեան (81) :



ԹՈՄԱՐՁԱ (Թոմարզա, 1911) – Խմորատիպ շաբաթաթերթ : Հրատարակութեան սկիզբը՝ Հինգշաբթի, 4 Մայիսի, 1911 թ. : Հրատարակութեան վայր՝ Թոմարզայի վանքը : Գին՝ հատը 10 փարա (82) : Թերթը լոյս տեսած է նշանաւոր յեղափոխական եւ գոծիչ Մարզպետի (Ղազարոս Ղազարեան) նախաձեռնութեամբ : Յօդուածները զբողը եղած է Մարզպետ, իսկ տպագրողը՝ Յովհաննէս սարկաւազ Թորոսեան

78. Ս. Դաւթեան, Թատերակամ Շարժումը Ներքին Գաւառներու Մէջ (1870-1900), «Ընդարձակ Տարեցոյց Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի, 1925», Կ. Պոլիս, 1924, էջ 322 :

79. Տես՝ Ակնայ «Ծաղիկ»ը :

80. Ս. Դաւթեան, Եջ. աշխ., էջ 322 :

81. Տես՝ Կարօ Սասունի, Հորիզոնէ Հորիզոն, «Բազին» ամսագիր, Պէյրուս, 1973, թիւ 11. էջ 14-15 :

82. Յովհ. Սրկ. Տոմարձայի (Թորոսեան), Պատմութիւն Հայ Տնարժայի, հար. Գ., Պէյրուս, 1969, էջ 1987-1988 :

(Տոմարծացի), վանքի իր սենեակին մէջ: Այս վերջինը կը դրէ՝ «Մարգպետ ամէն Երկուշաբթի օրեր, Թումարգա թերթին համար սպուելի: զրութիւնը ինծի կը յանձնէր, ես կը տպէի եւ Շարաթ իրիկունները գալով իր հետ կը տանէր» (83): Թերթին տեւողութեան մասին յստակ տեղեկութիւն չկայ: Նոյն աղբիւրին համաձայն, 1912 թ. Ի Բարեկենդանին թերթը կը շարունակուէր լոյս տեսնել: Քանի մը ամիս ետք, Մարգպետի թելադրութեամբ, Յովհաննէս սարկաւազ կ'անցնի Կեսարիոյ Սբ. Կարապետ վանքը: Կարելի է հետեւցնել որ թերթը լոյս տեսած է շուրջ տարի մը:

ԹՈՒՌՅԻԿ ԹԵՐԹ (Վան, 1896) – Հ. Յ. Դաշնակցութեան Վասպուրականի Կեդրոնական Կոմիտէի Հրատարակութիւն: 1896–97 թթ. ունի, վերոյիշեալ կոմիտէն, զանազան առիթներով, թուոցիկ թերթեր կը հրատարակէ, յաջորդական թուահամարներով եւ թուականներով: «Թուոցիկ թերթ»-ի կարգ մը համարներու լոյս ընծայման թուականները ճշդուած են.

- Թիւ 2 – 1896 թ. փետրուարի 5
- Թիւ 3 – 1896 թ. փետրուարի 25
- Թիւ 4 – 1896 թ. Ապրիլի 12
- Թիւ 5 – 1896 թ. Դեկտեմբերի 28
- Թիւ 1 – 1897 թ. Յունուարի 6

Հ. Յ. Դ. Ի կեդրոնական օրկանը՝ «Դրօշակ», յաճախ արտատպումներ կատարած է «Թուոցիկ թերթ»-երէն եւ կամ աղբով մը հաղորդած անոնց լոյս ընծայումը (84):

ԹՈՒՌՅԻԿ ԹԵՐԹ (Կ. Պոլիս, 1896) – Հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէի: Կարգ մը թիւերու լոյս ընծայման արձաղանդը կարելի է գտնել «Դրօշակ»-ներու մէջ (85), երբեմն ալ՝ անոնցմէ արտատպումներ: Երկու թիւերու թուականները ճշդուած են.

- Թիւ 9 – 1896 թ. Յունիսի 19
- Թիւ 11 – 1896 թ. Սեպտեմբերի 25

ԹՈՒՌՅԻԿ ԿԱՐՄԻՐ ՏԵՏՐԱԿ (Տիարպէքիւր, 1913) – Վիմատիպ: Հրատարակութեան սկիզբը՝ 1913 թ. Յունուարի 6: Յառաջելիմական զպրօցի հրատարակութիւն (86): Այլ տեղ մը՝ Ա. Ալպոյաճեան կ'աւել-

83. Նոյնը, էջ 2614–2615:

84. Տես՝ «Դրօշակ», 1896, Ե. տարի, թիւ 10, էջ 80, թիւ 11, էջ 82, թիւ 14, էջ 105: 1897, Զ. տարի, թիւ 4, էջ 31–32, թիւ 6, էջ 47:

85. «Դրօշակ», 1896, Ե. տարի, թիւ 16, էջ 121, թիւ 23, էջ 173:

86. [A. Alboyadjian], Les Armeniens et l'Imprimerie.

ցրնէ՝ «Ձ. դասի սանուք» (87) :

ԹՕՀԱՅԻ (Պարտիզակ) – Երզնիծական շարաթաթերթ : Խմորատիպ : Հրատարակուած է մերթ հայերէն, մերթ հայատառ թրքերէն : Թուականը յիշատակուած է : Սակայն պէտք է հրատարակուած ըլլայ 1867 թ.էն առաջ, քանի որ այս թերթին մասին կը յիշատակէ Պոլսոյ «Փունջ»ը՝ իր 1867 թ.ի Փետրուարի 18-ի համարով (88) : «Փունջ»ի նոյն յօդուածին մէջ կը յիշատակուի կրկին Պարտիզակի մէջ լոյս տեսած խմորատիպ այլ թերթ մը՝ «Պարտէզ Աղդային Ծաղկանց» անունով :

ԼՈՅՍ ԸՆԸԳ

Փայլամատան շաղ հէշտիթ. Գարանդիտա պրովես ցիլ :

— 5-3-2-2-1 1876 Հած : Մ/ս 7 —

ԼՈՅՍ-ԸՆԸԳ (Հածըն, 1876) – Վիմատիպ : Շարաթաթերթ : Լոյս տեսած հայատառ թրքերէն լեզուով : Առաջին էջին ճակատին՝ որպէս բնարան կայ հետեւեալը. «Փարլամատան վաղ կէշտիթ. Գարանըքտա պրովես պրովէ» (Հրատարակուած փայլելէ՝ խաւարին մէջ մի թողուր մեղ) : Առաջին թիւին թուականն է՝ 5 Յունիս, 1876 (89) : Թերթին խմբադիրը կը նկատուի ականաւոր յեղափոխական ժիրայրը՝ Մարտիրոս Պօյաճեան (90) : «Լոյս-Ընըգ»ի տեւողութեան եւ այլ

87. Ա. Ալոյսճեան, Հայերը եւ տպագրութիւնը... , էջ 137 :

88. «Փունջ»ի յիշատակուած թիւը կարելի չեղաւ գտնել հոս : Նմանապէս՝ Վիեննա : Ուտտի՝ կը գտնանք զայն յիշատակող աղբիւրով. Յակոբ Տէր-Յակոբեան, մշ. աշխ., էջ 224-225 :

89. «Լոյս-Ընըգ»ի մասին առաջին անգամ կը զրէ Գէորգ Վրդ. Արսլանեան եւ կը տպէ անոր Ա. համարին առաջին էջի նկարը (տես՝ Գէորգ Վրդ. Արսլանեան, ժիրայր, Կ. Պոլիս, 1911, էջ 7 եւ դիւրբին վերջին էջերը) :

90. Հակառակ որ Գ. Վրդ. Արսլանեան յստակ կերպով չ'ըսեր թէ ժիրայրն է «Լոյս-Ընըգ»ի խմբադիրը, Հնչակեան մտաւորականներ՝ Սիրվարդ եւ Արսէն Կիտուր անոր խմբադիր կը նկատեն ժիրայրը : Երկուքին ալ աղբիւրը կը հանդիսանայ Արսլանեան Վրդ.ի հրատարակած դործը (տես՝ Սիրվարդ, Խորհրդաւար Յեղափոխականը՝ Անտոն ժիրայր, Փարիզ, 1953, էջ 12 : Արսէն Կիտուր, Հայ Ազատագրութեան ճամապարհիմ, Պէրլութ, 1949, էջ 61) :

մանրամասնութիւններու մասին ոչ մէկ ուրիշ տեղեկութիւն կայ (91) :
 Հետաքրքրական է նշել թէ՛ Հաճըն, շնորհիւ միտիոնարներու,
 կանուխէն ունեցած է դպրոցներ: Հակառակ այս երեւոյթին, մամուլի
 մարդին մէջ ան եղած է աղքատ: Վերոյիշեալ պարբերութիւններէն եւ
 այլ ձեռագիր թերթէ մը դատ, Հաճըն չէ ունեցած ուրիշ թերթ: Տպա-
 դեր թերթի ոչ մէկ յիշատակութիւն, մինչեւ անդամ Սահմանադրու-
 թենէն ետք, երբ մանաւանդ դաւառներու մէջ բաղմամբիւ թերթեր ծը-
 նունդ առին:

ԼՈՒՄՆԱԿ (Նիւ Եորք) – Խմորատիպ: Թուական չէ յիշուած:
 Սահայն, Արսէն Տիրան, 1912 թ.ի «Ամերիկահայ Տարեցոյց»ին մէջ
 կը գրէ. «Թէ ինչ յառաջդիմութիւն կատարեր է Հայ մամուլը, բաւա-
 կան է յիշել 15 տարի առաջ լոյս տեսնող խմորատիպ ձեռագիր թեր-
 թիկները, «Լուսնակ», «Կայծակ» (92), «Շանթ» (93), «Հարուած»
 (94), եւն...» (95): Թէոդիկ, իր կարգին, առանց թուական յիշելու,
 կը յայտնէ թէ «Նիւ Եորքի մէջ խմորատիպ լոյս ընծայուած կան
 Լուսնակ, Կայծակ, Շանթ, Հարուած եւն. թերթիկներն այ» (96):

Եթէ ստոյգ նկատենք Արսէն Տիրանի հաղորդած տեղեկութիւն-
 ները, «Լուսնակ»ը եւ միւս երեք խմորատիպ թերթերը լոյս տեսած
 ըլլալու են 1895–97 թթ.ուն: Թերթերուն՝ Նիւ Եորք լոյս տեսած ըլ-

91. Յ. Գ. Պողոսեանի երկատրած Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը հատո-
 րին մէջ (Լոս Անճէլըս, 1942, էջ 484) կայ հետեւեալ տեղեկութիւնը. «Յետոյ, 1890
 թուականներուն «Ըրզ», այսինքն «Լոյս» անունով ուրիշ խմորատիպ թերթ մը եւս
 հրատարակուի սիսաւ Ժիրայրի կողմէն, սակայն քաղաքական դէպքերու բերումով
 անոր կեանքն ալ շատ երկար չի տևեց»: Աւելի քան հաւանական է թուականի չփո-
 թը, 1890 թուականներուն Ժիրայր չէր կրնար նման թերթ մը լոյս ընծայել Հաճընի
 մէջ, քանի որ ճիշդ 1890 թ.ին ան հետապնդման կ'ենթարկուի եւ խոյս կու տայ
 Հաճընէն, եւ թափառական ու յեղափոխական գործունէութեամբ լեցուն կեանքէ մը
 ետք, 1894 թ.ի Մարտի 24-ին, Եոզղատի մէջ կախաղանի մահուան կը դատապարտ-
 ուի:

92. Այս անունով Լիննի (ԱՄՆ) մէջ գոյութիւն ունեցած է խմորատիպ թերթ
 մը, 1895–96 թթ.ուն: Վիեննայի Միթիթարեանները ունին այս հաւաքածոն:

93. 1910 թ.ին, Պոսթոնի մէջ, Շահան Նաթային խմորագրած է նոյն անունով
 թերթ մը, սակայն սղագիր:

94. 1910 թ.ին, Նիւ Եորքի մէջ հրատարակուած է նոյն անունով խմորատիպ
 թերթ մը: Հաւանաբար տարբեր թերթ մըն է:

95. Արսէն Տիրան, Ամերիկահայ Մամուլը, «Ամերիկահայ Տարեցոյց», Ա. տա-
 րի, 1912, էջ 145:

96. Թէոդիկ, Տիպ առ Տառ, էջ 188:

լալը կարելի չէ ստոյգ նկատել, մանաւանդ որ Թէոդիկ աղբււր չի յիշատակեր :

Ուստի, բացի «Կայծակ»էն, միւս երկու թերթերն ալ — «Շանթ» եւ «Հարուած» — կարելի է նկատել հայ պարբերական մամուլի նոր յաւելումներ, քանի որ անոնք եղած են ժամանակակից, «որոնք չըտեսնուած ուղղադրութեամբ, դադարաւարներով ու խելքով ... զիրար կը հարուածէին անխնայ» (97) : Նոյն անուններով ժամանակակից թերթերու չենք հանդիպած նախապէս :

ԼՐԱՏՈՒ (Ուաշինկթըն, 1967) — Հրատ. Սբ. Խաչ Առաքելական Եկեղեցիի : Մեքենադիր բազմադրուած : Մեր տրամադրութեան կան բացառիկ 2 թիւեր՝ Հոկտեմբեր եւ Նոյեմբեր 1967 թուակիր : Այս թիւերը ունին յատուկ խմբադրական կազմ՝ գլխաւորութեամբ Գեղարդ Քահանայ Պապօղլեանի : Առանց էջաթիւերու (22 եւ 32 էջ) : 28×21 սմ. :

ԾԱՂԻԿ (Ակն, 1872-73) — Շարաթաթերթ : Հրատարակութիւն Ուսումնասիրական ընկերութեան (հիմնուած՝ Յուլիսի 1, 1872 թ.ին) (98) : Այս ընկերութիւնը՝ հիմնադրութեան Ա. տարին «Ծաղիկ անունով ձեռագիր (խմորատի՞պ) Շարաթաթերթ մը հրատարակած է», եւ այդ թերթը ընկերութեան «նիւթական-բարոյական շահ մը» ապահոված է (99) : Մեր տրամադրութեան տակ եղող աղբււրները «Ծաղիկ»ը կը նկատեն ձեռագիր թերթ : Միայն Հ. Եփրեմ Պօղոսեանը, յիշատակելով հանդերձ որ ան ձեռագիր եղած է, խմորատիպ ըլլալուն կասկածը ունի, ինչպէս տեսնուեցաւ վերեւ կատարուած մէջբերումէն : Նիւթական եւ բարոյական շահ ապահովելու համար հարկ է որ թերթը լոյս տեսած ըլլայ բազմաթիւ օրինակներով եւ հարուստ բովանդակութեամբ : Ուստի, երբեք անհաւանական չէ որ ան եղած ըլլայ խմորատիպ :

«Ծաղիկ»ին տեւողութեան մասին Հ. Եփրեմ Պօղոսեան, առանց պատճառը յիշատակելու, կը յայտնէ թէ երկրորդ տարուան սկիզբը Ազգ. վարչութիւնը դադրեցնել կու տայ թերթը (100) :

97. Աբոէն Տիրան, Աշ. աշխ., էջ 145 :

98. Հիմնադրները՝ Տոբթ. Ս. Գարբիէլեան, Յակոբ Գորեան, Զարեհ Թորոսեան, Յարութիւն Բէիսեան, ղեղադրործ Ստեփան Մազմանեան, եւն. : «Ուսումնասիրական ընկերութեան» համար տես՝ Հ. Եփրեմ Վրդ. Պօղոսեան, Պատմաբիւմ Հայ Մշակութային Ընկերութիւններու, հտր. Գ., Վիեննա, 1969, էջ 6-7 : Ս. Դաւթեան, Աշ. աշխ., էջ 321-322 :

99. Հ. Եփրեմ Պօղոսեան, Աշ. աշխ., էջ 6-7 :

100. Նոյնը, էջ 7 :

Թէոդիկ կը յայտնէ, թէ Սմբատ Դաւթեան (101) «Հրասպարահազիբի նախաքայլը փորձած է Ակնայ Ծաղիկ ձեռագիր հանդէսին մէջ» (102) :

ԾԱՂԻԿ (Հաճըն) – Ձեռագիր շարաթաթերթ: Գրական, դիտական եւ անողջնաստեղծական բովանդակութեամբ: Մէկ մասը հրատարակուած է հայատառ թրքերէն, ժողովուրդին աւելի հասկնալի ըլլալու մտահոգութեամբ: 9–10 ամսուան կեանք ունեցած է «Ծաղիկ»ը: Խմբագիրը եղած է Մարտիրոս Սէքսէնեան, Վարդանեան վարժարանի շրջանաւարտներէն եւ տեղի երիտասարդ մտաւորականներէն: Հրատարակութեան թուականը յայտնի չէ, սակայն լոյս տեսած ըլլալու է 1890 թ.էն առաջ, 1880ական թուականներուն (103) :

ԾԻԱԾԱՆ (Թիֆլիս) – 1895 թ.ին, Թիֆլիսի մէջ, Ստեփան Շահումեանի նախաձեռնութեամբ կը հիմնուի «Ծիածան» աշակերտական խմբակը, որուն կ'անդամակցին տեղի միջնակարգ վարժարաններու հայ աշակերտները: Այս խմբակին կողմէ կը հրատարակուի խմբարտիպ թերթ մը՝ կրկին «Ծիածան» անունով, որուն տպագրութիւնը կը վստահուի Գարեգին Երեցեանի (104) :

«Ծիածան»ի առաջին համարին մէջ լոյս կը տեսնեն Սո. Շ. Շահումեանի կողմը, Արագիբի (Մովսէս Յարութիւնեան) ոտանաւորները, եւս: Յովհաննէս Թումանեան, որ «Ծիածան» խմբակի հանդիպումներուն երբեմն ներկայ կ'ըլլայ, թերթի խմբագրական աշխատանքին մէջ կ'օգնէ պատանի աշակերտներուն (105) :

Սկզբնական շրջանին, «Ծիածան»ի մէջ լոյս կը տեսնեն դեղարուեստական գործեր եւ կրթական հարցեր շօշափող յօդուածներ: Աւելի ուշ, 1901 թ.ին, յեղափոխական բովանդակութեամբ յօդուածներ ալ տեղ կը գտնեն անոր մէջ: «Ծիածան»ի օրինակը կ'ըլլայ վարակիչ եւ անոր ազդեցութեան տակ այլ աշակերտական թերթեր եւս լոյս կը տեսնեն (106) :

101. Ծանօթ մտաւորական, տնօրէն, մանկավարժական դասագիրքերու հեղինակ, «Բիւրակ»ի խմբագիր 1898–1902 թթ.ուն:

102. Թէոդիկ, Ամէմուն Տարեցոյցը, 1927, 21–րդ տարի, էջ 600:


103. Տես՝ Յ. Գ. Պօզոսեան, Աշ. աշխ., էջ 483–484:

104. Դ. Երեցեան, Յուշեր Ստեփան Շահումեանի կեանքից, Երևան, 1966, էջ

29:

105. Ի. Դուրբինսկի–Մուխամէ, Շահումեան, Երևան, 1974, էջ 15:

106. Ա. Կարէ Զանջուղազեան, Աշ. աշխ., էջ 52–53:



ՄՈՎԱԿ (Ուարբերդ, 1908) – Գրական թերթ: Ձեռագիր: Հրատարակութիւն Ուարբերդի Կեդրոնական վարժարանի դրասէր ուսանողներու: Հրատարակութեան սկիզբը՝ 1908 թ.ի Հոկտեմբեր: Թերթի ճակատին դրուած է. «Մովակ. Կիսամեայ Հանդէս ազգային դրական եւ կրթական»: Թիւ 8ի (1 Փետր. 1909) խմբագրականէն ի յայտ կու դայ, թէ նոր տարուան առիթով հրատարակուած է բացառիկ թիւ մը, որ մեծ ընդունելութեան արժանացած է:

«Մովակ»ի Ա. Թիւին լոյս ընծայման առիթով, Կեդր. վարժարանի տնօրէն եւ ծանօթ գիւղադիր Թլկատինցի, ի մէջ այլոց, գրած է. «Ձեր առաջին թիւը ուշագրաւ բաներ ունէր. շատ ապրիք, սիրեցի յուսալով որ հետզհետէ միւս թիւերն ալ լաւ պիտի ըլլան ու գերազանցած միշտ առաջինները»:

Այս ձեռագիր հանդէսին մէջ գրութիւններ ունեցած են Թլկատինցին եւ Եփրատ Գոլէճի ուսուցիչներէն ոմանք: Թերթին անունով անոր շուրջ խմբուած տղաքը ճանչցուած են «Մովակեանք» անունով, եւ Թագէ Մանկասարեանի ղլխաւորութեամբ ունեցած են նաեւ «Դրպրոցականներու Տարեգիրքը» ձեռագիր հատորիկը (107):

ՄՈՓԱՑ ԱՐՄԻԻ (Ուարբերդ, 1908) – Խմորատիպ: Հրատարակութիւն Մէզիբէի Կեդրոնական վարժարանի աւարտող կարգերու: Սահմանադրութենէն ետք է որ լոյս կը տեսնէ «Մովակ Արծիւ»ը, Սահ-

107. Վահէ Հայկ, Խարբերդ եւ Անար Ոսկեղէն Դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 398-400:

մանադրութենէն առաջ, կրկին աւարտող կարգերու կողմէ, լոյս ընծայուած է խմորատիպ թերթ մը՝ «Նոր Գարուն» անունով (108) :

ԿԱՅԾ (Վան) (109) – Ամսաթերթ : Խմորատիպ : Առաջին օրկան Բարեսիրական ընկերութեան : Տեւոդոսթիւն՝ 1 տարի (110) : «Կայծ»-ի Բարատարակութեան թուականը չէ յիշուած : Սակայն, ծանօթ է որ Բարեսիրական ընկերութիւնը հիմնուած է 1898 թ.ին եւ մինչեւ 1908 թ. ան կը կոչուէր Հայ Պատանեաց Բարեսիրական Ընկերութիւն եւ կը կոչուէր Հայ Պատանեաց Բարեսիրական Ընկերութիւնը, իսկ 1908 թ. ինչու որ Կայծ թերթը հիմնուած է 1898 թ.ին եւ մինչեւ 1908 թ. ան կը կոչուէր Հայ Պատանեաց Բարեսիրական Ընկերութիւնը, իսկ 1908 թ. ինչու որ Կայծ թերթը հիմնուած է 1898 թ.ին եւ մինչեւ 1908 թ. ան կը կոչուէր Հայ Պատանեաց Բարեսիրական Ընկերութիւնը, իսկ 1908 թ. ինչու որ Կայծ թերթը հիմնուած է 1898 թ.ին եւ մինչեւ 1908 թ. ան կը կոչուէր Հայ Պատանեաց Բարեսիրական Ընկերութիւնը :

ԿԱՐԴԱ ԶԻՍ (Կ. Պոլիս 1934, 1941) – Պոլսոյ մէջ լոյս տեսած երգիծական տարեգիրքերու ժանրէն : Խմորատիպ-Հարատարակիչը՝ Զ. Արշակ, որ 1931–32 թթ. ուն լոյս ընծայած է «Նորախճանքի տարեգիրք»-ը (Երկու Հատոր) : «Կարգա Զիս»-ը լոյս տեսած է 1934 թ.ին, կարծէք «Նորախճանքի տարեգիրք»-ին շարունակութիւնը եղած ըլլար : 128 էջ : 20×14 սմ. : «Կիւթէմպէրկ» տպարան : Նոյն անունով այլ Հատոր մըն ալ ունի Զ. Արշակ, 1914 թ.ին տպուած : 16 էջ : Նոյն չափերով : Լոյս տեսած՝ «Պեճիտ» տպարանէն :

ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ (ԱՄՆ, 1921) – 1921 թ.ին սպարաւորուած զրութեան մը մէջ, նոյն տարուան ընթացքին ԱՄՆ-ի մէջ Հարատարակուող թերթերուն անդրադառնալով, Ա. Արարատեան, ի մէջ այլոց կը գրէ. «Ատեն ատեն կ'երեւին նաեւ «Կարմիր Լուրեր», «Նոր Հոսանք» անուն թերթեր» (112) : Այս երկուքն «Նոր Հոսանք»-ը ծանօթ է որպէս աշխատաւորական թերթ, որ լոյս տեսած է Նիւ Եորք, 1921 թ.ին, խմբագրութեամբ՝ Առաքել Թաթաւեանի, Արսէն Զոլախեանի, Յակոբ Նաչատուրեանի : «Կարմիր Լուրեր»-ն ալ ժամանակակից է «Նոր Հոսանք»-ին :

ԿԻԼԻԿԻԱ ՍՍԼՆԱՄԷՍԻ (Նիւ Եորք, 1918) – Տարեգիրք : Ա. տարի, 1918 : 224 էջ (113) : 20×13 սմ. : Բովանդակութիւնը՝ մեծ մասով

108. Նոյնը, էջ 443 :

109. Զիւթեմպէր միւս «Կայծ»-ին հետ, որ կրկին լոյս տեսած է Վանի մէջ, արմենական Վարդան Պապիկեանի խմբագրութեամբ, եւ որ արդէն ծանօթ է Հայ մամուլի մասնագիտութեան :

110. Երուանդ Տէր Մկրտիչեան, Եր. աշխ., էջ 622 :

111. Այս միութեան մասին տեսել՝ նոյնը, էջ 628–629 :

112. Ա. Արարատեան, Հայ Գաղթականութիւնը Ամերիկայի Մէջ, «Արշալոյս» տարեգիրք, 1922, Գ. տարի, էջ 64 :

113. Մեր արամադրութեան տակ եղող օրինակին ետեւի կողքը կը պահուի Վերջին էջը՝ 224 :

Հայաստան թրքերէն է: Կան նաև Հայերէն եւ անգլերէն բաժիններ: Լոյս տեսած է տպարան «Հայկ»էն: Յաջորդ տարիներուն չենք հանդիպած այս տարեգիրքին, հակառակ որ Ա. Հատորին մէջ կ'ըսուի թէ յառաջիկայ տարուան տարեգիրքը 1918 թ.ի Ծնունդին (Դեկտ. 25) պատրաստ պիտի ըլլայ (114): Այս յայտարարութենէն կարելի է հետեւցնել, թէ Ա. տարուանը լոյս տեսած է Ծնունդէն ետք, 1918 թ.ի սկիզբը:

ԿՈԿՈՆ (Եողուն-Օլուք, Մուսա Լեռ, 1921) – Ամսաթիւ: Առաջին շորս թիւերը՝ ձեռագիր, ապա՝ խմորատիպ: Խմբագիր-հրատարակիչ՝ ճորճ Գաղանճեան: Սկսած է հրատարակուիլ 1921 թ.ի Փետրուարին: 8 էջերէ բաղկացած եւ 20 օրինակով լոյս տեսած: Թերթին մէջ լոյս տեսած են ստորագրութիւնները Վեր. Տիգրան Անդրէասեանի, Ա. Լէյլանիի (Մովսէս Տէր Գալուստեան), Ծաղիկ ձէրիտեանի (ապա՝ Տիգրան Արսէն Երկաթ), Սերժան Թովմաս Աբրահամեանի, եւն. (115):

ԿՈՉՆԱԿ (Նիւ Եորք, 1899) – Ձեռագիր: Լոյս տեսած նախքան տպագիր «Կոչնակ»ի հրատարակութիւնը, 1905 թ.ի Դեկտեմբերի 15-էն սկսեալ, Հ. Ալլէնի խմբագրութեամբ: Ձեռագիր «Կոչնակ»ը սկսած է հրատարակուիլ 1899 թ.ի Հոկտեմբերին: Խմբագիր՝ Վեր. Յ. Գ. Սանդիկեան (116):

ԿՈՌԻԱՆ-ԿՈՏՈՇ (Վան, 1907) – Խմորատիպ: Օրկան Նիհիլիստ (անիշխանական) երիտասարդներու (117):

ԿՐԹԱՍԻՐԱՅ (Մալաթիա, 1910-14) – Շարաթաթերթ: Խմորատիպ: Խմբագիր՝ Եղիա Թօփալեան: Հրատարակութիւն՝ Կրթասիրաց Ընկերութեան: Ըստ Ա. Ալպոյաճեանի, չիտթի մը հետեւանքով՝ թերթին անունը «Կրթասիրաց» կրնայ դրուած ըլլալ, փոխան «Լուսնակ»ի (118):

114. Կիլիկիա Մալմաւէսի, 1918, Նիւ Եորք [1918], էջ 5:

115. Տես՝ Մարտիրոս Գուշագճեան եւ Պօղոս Մատուռեան, Յուշամատենամ Մուսա Լեռամ, Պէյրութ, 1970, էջ 570: Օգտագործած ենք նաև 1977 թ.ին Այնճարի (Լիբանան) մէջ Վահրամ Շամմասեանի՝ ճորճ Գաղանճեանէն քաղած տեղեկութիւնները: Շամմասեան մեզի տրամադրեց ձեռագիր վիճակի մէջ եղող իր տեղեկութիւնները:

116. Արսէն-Տիգրան, Բշ. աշխ., էջ 138:

117. Ե. Տէր Մկրտիչեան, Բշ. աշխ., էջ 622: Նաև՝ Նշան Յովհաննէսեան, Բշ. աշխ., էջ 307: Այս վերջինը թերթին անունը կը զրէ՝ «Կոռուան Կոտոչ»:

118. Արշակ Ալպոյաճեան, Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէյրութ, 1961, էջ 797-798:

ՀԱ-ՊԱՊԱՄ (Մէյտան-էպզէզ, 1918-19) - Երզնիծական շարաթաթերթ: Խմորատիպ: «Օրկան Աստղիկը խնկարկող քրմապետներուն ...»: Հրատարակուած հայ կամաւորներու կողմէ, Մէյտան-էպզէզ (Սուրիա), թրքական սահմանի վրայ: Գասալար Մենակ եղած է աշխատակիցներէն «Հա-Պապամ»: Կիսով ընթեռնելի թիւ մը ունի Արտաշէս Տէր-Գէորգեան: 8 էջ: 29×23 սմ.:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՕՐԱՅՈՅՑ (Պէյրութ, 1946) - Տարեգիրք մը, որ որպէս ենթախորազիր ունի «Խորհրդային Հայաստան եւ իր նուաճումները դրական, դեղարուեստական, մշակութային ու արդիւնաբերական մարդերու մէջ»: Պէյրութ, տպ. «Լուսարձակ», 1946: Առանց էջաթիւերու (52 էջ): 22×12.5 սմ.: Խմբագիր-հրատարակիչն է Եղիա Յ. Տօլպաղեան, որ 1936 թ.ին խմբագրած է «Լիրանանահայ Պատկերադարձ Օրացոյց»ը եւ 1937-42 թթ.ուն՝ «Ամէնուն Նոր Տարեցոյցը»:

«Հայրենական Օրացոյց»ի աշխատակիցներու շարքին կան անունները Խաչ Արք. Աջապահեանի, Արսէն Կիտուրի, Շաւարշ Վրդ. Գուլումճեանի (ապա՝ Եպիսկոպոս), Գիմսեղաի (Գառնիկ Ս. Դաւիթեան), եւն.: Հատորին վերջաւորութեան, ետեւի կողքին վրայ կայ հետեւեակ ծանուցումը. «Մօտ օրէն փնտռեցէք Լուսարձակ պարբերագիրքը»: Այնպէս կը թուի, թէ Յ. Տօլպաղեան նպատակ ունէր «Լուսարձակ» տպարանէն լոյս ընծայել համանուն թերթ մը, սակայն «Հայրենական Օրացոյց»ի հրատարակութենէն կարճ ժամանակ ետք, ներդաղթի օրերուն, ինք ալ կը մեկնի հայրենիք, եւ «Լուսարձակ» պարբերաթերթի հրատարակութիւնը ծրագրի սահմանէն անդին չ'անցնիր (119):

ՀԱՐՈՒԱՄ, տես՝ ԼՈՒՄՆԱԿ:

ՀՆՁԱԿ (Վան, 1907) - Խմորատիպ: Հրատարակութիւն Ս. Դ. Հնչակեան երիտասարդներու (120):

ՀՈՒՆՁՔ (Քուէյթ, 1966) - Մեքենազիր բաղմադրուած: Հրատարակութիւն Քուէյթի Ազգային երկուսե վարժարանի: Ա. թիւ, 1966 (1965-66 տարեշրջան): 30 էջ: 33×22 սմ.: Բովանդակութիւն՝ աշակերտներու դրութիւններ, տեղեկութիւններ նախակրթարանի

119. Նմանօրինակ պարագաներ չփոթ յոռաջնուցած են հայ պարբերական մամուլի մատենադիտութեամբ դրադողներուն մօտ: Այս ուղղութեամբ լաւագոյն օրինակներ կը հանդիսանան Խ. Մխաբեանի «Մտղկոցածոր»ը, Գր. Զօհրապի «Նոր Օր»ը, եւն.:

120. Նշ. Յովհաննէսեան, Աշ. աշխ., էջ 307: Ե. Տէր Մկրտիչեան, Աշ. աշխ., էջ 622:

չրջանաւարտներու մասին, լուսանկարներ :

ԶԳՏՈՒՄ (Վան) – Խմորատիպ (121) :



مانوقنهرو حای رهنیک

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԻՔ

ՇԱՐԱԹԱԹԵՐԲ

Գ Ի Ն 100 Փ Ա Ր Ա

թի 7

ԿԻՐԱԿԻ 11 ՕԳՈՍՏՈՍ 1918

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԻՔ (Կ. Պոլիս, 1918) – Շարաթաթերթ: Մանուկներու եւ պատանիներու յատուկ՝ դաստիարակչական բովանդակութեամբ: Մեր տրամադրութեան տակ ունինք վերոյիշեալ թերթէն թիւ մը. թիւ 7, Կիրակի, 11 Օգոստոս 1918 թուակիր, կը բաղկանայ մէկ պրակէ (էջ 89–104): 23×16 սմ.: Գրութիւններ ունին՝ Հրանդ Ծ. Վարդապետ, Գրիգոր Մարգարեան, Դաստիարակ, Մենտոր, Եր. Տ. Անդրէասեան, Աղեքս. Փանոսեան: Վերոյիշեալ համարին 103րդ էջին մէջ խմբագրութիւնը կը յայտնէ. «Մեր ՊԶՏԻԿ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ – Յառաջիկայ Սեպտեմբերէն սկսելով «Մանուկներու ՀԱՅՐԵՆԻՔ»ը պիտի հրատարակուի կէսը տարրական եւ միջին դասընթացներու տղոց եւ միւս կէսն ալ բարձրագոյն եւ լրացուցիչ դասարաններու Օրիորդներուն եւ Պարոններուն յարմար նիւթերով: Այն ատեն պիտի սկսինք նաեւ մասնաւորաբար տնտեսագիտութեան դասերուն՝ որոնցմէ շատ պիտի օգտուին հայ պատանիները»:

ՄԱՇՏՈՑ (Պաղտատ, 1963) – Տարեգիրք: Հրատարակութիւն Պաղտատի Ազգային Միացեալ վարժարանի: Եղ. Գիւլբէկեան կը յիշատակէ նոյն վարժարանի «Մաշտոց» տարեգիրքը՝ 1966 թ.էն սկսեալ (122): Ինչ որ ճիշդ է: Սակայն, նոյն վարժարանը նախքան «Մաշտոց»ը, 1962–63 տարեշրջանին լոյս ընծայած է «Տեղեկագիր»ներ,

121. Ե. Տէր Մկրտիչեան, Աշ. աշխ., էջ 622:

122. Եղ. Գիւլբէկեան, Աշ. աշխ., էջ 51:

1963-64-ին «Տարեգիրք», իսկ 1964-65-ին՝ «Տարեգիրք-Ալպիւմ» : Այս վերջինին չափն է՝ 22×32 սմ. : Օֆ-սէք, տպ. Շահինեան : 1965-66 տարեշրջանէն կը սկսի կոչուիլ «Մաշտոց» տարեգիրք :

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ (Մոնթրէալ, 1968) - Մեքենադիր օֆ-սէք : Հրատարակութիւն Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ. Կամքի : Ա. տարուան առաջին համարին թուականն է՝ Ապրիլ-Մայիս 1968 : Առանց էջաթիւի (16 էջ) : 21.5×17.5 սմ. : Խմբագրական կազմ՝ Պերճ Գարապաճեան, Յակոբ Մանուկեան, Գրիգոր Նիղիպլեան, Աշոտ Սերոբեան, Յակոբ Սեւակեան :

ՄեՂՈՒ (Պարտիզակ, 1910) (123) - Խմորատիպ : Պատկերազարդ երգիծաթերթ : Հրատարակիչ՝ Արիկ Տ. Մինասեան (124) :

ՄՏՐԱԿ (Ակն, 1875) - Շարաթաթերթ : Հրատարակիչ-խմբագիր՝ Յարութիւն Պլէօ-Խան Ապուլէիսցի : Ազատական եւ հակակղերբողանդակութեամբ (125) : Հրատարակութեան թուականն է՝ յիշատակուած, սակայն շատ հաւանաբար ըլլալու է 1875 թ. : Քանի որ, Յարութիւն Ապուլէիսցին, նախնական կըթուութիւնը Ակնայ Ապուլէիս դիւղին մէջ ստանալէ ետք, կը մեկնի Պոլիս եւ կ'աշակերտի Խասգիւղի Շահնազարեան վարժարանին : 1875 թ. ի վերջերք կը դառնայ հոս : Ինք, տարի մը ետք կը ձեռնադրուի քահանայ եւ կը քահանայադրօժէ Ակնայ Կամարակապի եկեղեցին մէջ, միեւնոյն ատեն վարելով ուսուցչիչի պաշտօն (126) : «Ազատական ու հակակղերբ» բովանդակութեամբ թերթ, Ակնայ մէջ, Յարութիւն Ապուլէիսցին (127) կրնար միայն նախքան քահանայ դառնալը հրատարակել, այսինքն՝ 1875 թ. ի վերջերուն եւ 1876 թ. ին :

ՆԱԻԱԿ (Էջմիածին, 1902) - Ամսաթերթ : Գաղտնի : Խմբագիր՝ Սահակ Չթչեան (1882-1957), որ 1898 թ. ին կը յաջողի մտնել Էջմիածինի Կէորդեան ձեմարանը, որուն Ա. լսարանը կ'աւարտէ 1902 թ. ին : Ա. լսարան եղած ատենն է որ Սահակ Չթչեան կը հրատարակէ «Նաւակ»ը (128) :

123. Չլիոթիլ խմորատիպ երկրորդ «Մեղու»ին հետ, կրկին Պարտիզակի մէջ, հրատարակուած Հ. Յ. Դանսակցութեան ակումբին կողմէ, որպէս շարաթաթերթ, որ կանոնաւորապէս լոյս տեսած է 1912-1914 թթ., խմբագրութեամբ՝ Գեղամ Գուլակեանի (Թորոյոմ Արքեպս. ի եղբորորդին) :

124. Յակոբ Տէր Յակոբեան, ԵՂ. աշխ., էջ 225 :

125. Ս. Դաթեան, ԵՂ. աշխ., էջ 322 :

126. Մկրտիչ Պարսամեան, խմբ., Ակն եւ Ակնցիք, Փարիզ, էջ 645-646 :

127. Ապա՝ Գարեգին Քահանայ Արժրուհի :

128. Ե. Տէր Մկրտիչեան, ԵՂ. աշխ., էջ 550 :

ՆԵՌ (Վան, 1910) – Խմորատիպ: Չաւեչտաթերթ: Սկսած է հրատարակուիլ 1910 թ.ի Նոյեմբերի 5-էն սկսեալ: Աղբիւրը, որմէ կը քաղենք այս թերթին վերաբերող տեղեկութիւնները, կը յայտնէ թէ անոր յիշատակութեանը ժամանակ 7 թիւեր լոյս տեսած են արդէն (129):

ՆՈՐ ԳԱՐՈՒՆ (Խարբերդ) – Տես՝ ԾՈՓԱՅ ԱՐԾԻԻ

ՆՈՐ ԴԱՐ (Կ. Պոլիս, 1962) – Քաղաքական, դրական, դեղարուեստական շարաթաթերթ: Արտօնատէր եւ հրատարակութեանց պատասխանատու տնօրէն՝ Հերմինէ Սինանեան: Վարիչ խմբադիրներ՝ Հերմինէ Սինանեան եւ Ջաւէն Պիպէռեան: 13-րդ համարէն սկսեալ՝ Պիպէռեանի անունը չկայ: Նոյն համարով թերթը կ'ունենայ 12 էջ, փոխան 16ի: 52×29 սմ.: Հրատարակուիլ սկսած է 1962 թ.ի Հոկտեմբերի 12-ին: Լոյս տեսած՝ 15 թիւ:

Հերմինէ Սինանեան, նախքան «Նոր Դար»ի հրատարակութիւնը, լոյս բնծայած է «Դար» կիսամսեայ պարբերաթերթը, ընդամէնը 42 թիւ, 1959 թ.էն մինչեւ 1962 թ.ի Սեպտեմբերի 15-ը: Պէտք չէ շփոթել «Դար»ը եւ «Նոր Դար»ը իրարու հետ: Արդէն, «Նոր Դար»ի Ա. թիւով, ընթերցողներուն ուղղուած խօսքին մէջ կ'ըսուի. «Այսօր ձեզի նոր թերթ մը կ'ընծայենք»: Վերջին համարին թուականն է 1963 թ.ի Փետրուարի 4:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ (Հաւաւ, Բալահոյիտ, 1913) – Խմորատիպ: Կրական, տեղական եւ հասարակական ամսաթերթ: Հրատարակութիւն Հաւաւանի Հ. Յ. Դ. Պատանեկան միութեան: Լոյս կը տեսնէ 1913 թ.ի Սեպտեմբերի 15/28-էն սկսեալ: Խմբադիր՝ Մովսէս Լէյլիկեան, փոխ-խմբադիրներ՝ Մելքոն Փոլատեան եւ Յովսէփ Փափաղեան: Բաժանորդներ կ'արձանագրեն Բալուի շրջանէն (տարեկան՝ 6 դրուշ), Թուրքիայէն (9 դրուշ), Ամերիկայէն (12.5 դրուշ) (130):

129. Աղբիւրը կը հանդիսանայ ձեռագիր տետրակ մը, որուն անուանաթերթին վրայ կան հետեւեալ ծանօթութիւնները. «Պզտիկ նօթատետր. [Առաջին տետր] Եր – Թէր. Վան, 1910 Յունիս»: 436 էջ: «Եր-Թէր»ը հաւանաբար բլալու է Երուանդ Խէչրղեան: Օրոգիրի տպաւորութիւն կը թողու այս տետրը, որուն մէջ երիտասարդ «Եր – Թէր»ը արձանագրած է իր կարգացած դիրքերուն անունները, հայ հեղինակներու երկերու ցանկերը, նշանաւոր ասոյթներ եւ մտքեր, եւ մեզի համար կարեւորագոյնը՝ տուած է հայ պարբերական մամուլի ցանկ մը, ուսկից կը քաղենք «Նեո»ի մասին հայթայթուած տեղեկութիւնները: Ան կը յայտնէ որ թերթը եղած է «ստորն-ձառիպ», որ համազօր է խմորատիպի:

Վերոյիշեալ տետրը կը գտնուի Հայկազեան Գոլէճի զրազարանին մէջ:

130. Յարութիւն Զախուրեան, Պատմութիւն Բալախոյիտի Հնուց Միջնու Մեր Օրերը, Պէրուսթ, 1974, էջ 421-422:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ (Գահիրէ, 1932) – Տես՝ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ (Պլովդիւ, 1939) – Ամսաթերթ Մխիթարեան Սանուց միութեան: Խմորատիպ: Ա. Համարին թուականը՝ 1939 թ.ի Մայիսի 1: 10 էջ: 32×24 սմ.: Մխիթարեան Սանուց միութիւնը իր հիմնումէն շուրջ 2 տարի ետք «կը սկսի հրատարակել երիտասարդական ամսաթերթ մը՝ «Նոր Սերունդ» անունով, որուն նպատակը պիտի ըլլայ օժանդակել միութեան անդամներու եւ ամէն հայ երիտասարդի մշակութային զարգացման»: Այս մէջբերումը կը կատարուի Ա. Համարի խմբագրականէն, որուն տակ ստորագրած է Ժ. Խորէնի անունով անձ մը. բան մը՝ որ ենթադրել կու տայ անոր խմբագիր ըլլալը:

ՆՈՒԻԿ (Տէօրթ-ԵՈՒ, 1914–15) – Խմորատիպ շաբաթաթերթ (131): Շատ հաւանաբար լոյս ընծայուած 1914 թ.ի Դեկտեմբերին եւ 1915 թ.ի սկիզբները: Խմբագիրները եղած են Միհրան եւ Մարտիրոս Տէր Ստեփանեանները: Առաջինը՝ ուսուցիչ, երկրորդը՝ տնօրէն տեղւոյն Կեդրոնական Բարձրագոյն վարժարանին: Քանի մը թիւ լոյս տեսած (132): Միհրան Տէր Ստեփանեան կը յայտնէ թէ «Նուիկ»ին պատճառով՝ կախողանի ջուանէն իր վիզը հազիւ ազատած Մարտիրոսը կը դատապարտուի երկու տարուան բանտարկութեան (133):

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ (Արաբկիր, 1877) – Շաբաթաթերթ: Խմորատիպ: Խմբագիր՝ Յովհաննէս Մաթիկեան: Այս թերթի մասին Կ. Պոլսոյ «Փունջ»ը կը զրէ. «... Ներկայ տարւոյս [1877 թ.] սկիզբէն Արաբկիր շաբաթական հանդէս մը հրատարակիլ սկսած է, խմբագրութեամբ Ս. Նշան զպրոցի տնօրէն Մաթիկեան մեծ. Յովհաննէս Էֆէնտի: Ի վերջոյ, նոյն ձեռագիր թերթն ձեռք բերել յաջողեցանք. նիւթը ազդային է, եւ կը պարունակէ տեղական լուրեր ալ. շարագրութիւնը՝ կոկիկ, ամփոփութիւնն՝ իմաստալից: Տարեդինն է միայն ½ անթաթ մէճիտ» (134):

Հետաքրքրական է նշել թէ «Շաբաթական Հանդէս»ը Արաբկիր

131. Խմբագիր Միհրան Տէր-Ստեփանեան «Նուիկ»ի մասին կ'անհարկէ իր «Տեղատար» որ Զվտեցաւ...» կենսագրական բնոյթի պատմութեան մէջ (տես՝ «Անի» ամսագիր, Գ. տարի, 1949, էջ 518: Նոյնը՝ Մ. Տէր-Ստեփանեան, Երկեր, Պէտրոս, 1967, էջ 152–153:

132. Հայկ ժամկոչեան կը յայտնէ թէ «Նուիկ»ը լոյս տեսած է միայն շորս թիւ (տես՝ Հ. Ժամկոչեան, Գրող Դաւիթը՝ Միքիմա Տէր-Ստեփանեան, «Ջահակի» (Գահիրէ), Նոր շրջան, թիւ 62 (21 Յունուար, 1965):

133. Մ. Տէր-Ստեփանեան, Գ. աշխ., էջ 518:

134. «Փունջ», Կ. Պոլիս, 1877, թիւ 1153, էջ 2, Ա. սիւնակ:

րի մէջ լոյս տեսած միակ ծանօթ թերթն է: Մինչեւ իսկ 1908 թ.ի Սահմանադրութենէն ետք, երբ ժամանակաւոր նպաստաւոր պայմաններ ստեղծուեցան, Արարկիրի մէջ որեւէ թերթի յիշատակութեան չենք չանդդալիր:

Հ. Եփրեմ Վրդ. Պօղոսեան կ'ըսէ թէ Արարկիրի մշակութային կեանքին համար պատուարեր իրողութիւն մըն է տեղական թերթի մը դոյութիւնը, «հոգ չէ թէ ձեռագիր կամ խմորատիպ եղած ըլլայ ան» (135):

«Փունջ»էն կատարուած մէջբերումին մէջ յստակ կերպով կ'ըսուի թէ թերթը ձեռագիր է: Սակայն անհաւանական չէ որ ան եղած ըլլայ խմորատիպ, քանի որ այդ ժամանակներուն «խմորատիպ» բացատրութեան չենք չանդդալիր, եւ մինչեւ իսկ խմորատիպ թերթերուն «ձեռագիր» կ'ըսուի: Յստակ է սակայն որ «Շարաթական Հանդէս»ը լոյս ընծայուած է բազմաթիւ օրինակներով եւ ունեցած է բաժանորդներ:

ՇԱՆԹ (ԱՄՆ) – ՏԵՍ՝ ԼՈՒՍՆԱԿ

ՇԱՐԻՎԱՐԻ (Վան) – Խմորատիպ: Խմբադիրներ՝ Արտաշէս Սօլախեան եւ Արբահամ Բրուտեան (136): Խմբադիրները եղած են Վանի Հնչակեան ղեկավարներէն, երկուքն ալ սպաննուած 1915 թ.ին, Վանի բանտին մէջ, հնչակեան այլ ղեկավարներու հետ:

ՈՎԱՍԻՍ (Վան, 1909) – Խմորատիպ (137):

ՊԱՀԱՆՁ (Իզմիր, 1898–99^o) – Խմորատիպ թերթ: Լոյս տեսած հաւանաբար 1898–99 թթ.ուն: Հրատարակութիւն Իզմիրի Հ. Յ. Դաշնակցութեան՝ կուսակցական ընկերներու համար: Լոյս ընծայուած՝ հինգ-վեց ամիս: Դադարած՝ առ ի զգուշութիւն (138):


ՊԱՏԱՆԵԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ (Նաղարէթ, Պաղեստին, 1925) – Խմորատիպ թերթ: Լոյս տեսած Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյց

135. Անդրանիկ Լ. Փոյատեան, Պատմութիւն Հայոց Արաքիի, Նիւ Եորք, 1969, էջ 586: Տես նաեւ՝ էջ 579 եւ 261:

136. Ե. Տէր Մկրտիչեան, Բշ. աշխ., էջ 623: Նաեւ՝ «Արծուի Վասպուրական», 1943, Դ. տարի, թիւ 6, էջ 7:

137. Ե. Տէր Մկրտիչեան, Բշ. աշխ., էջ 623:

138. Ե. Թօքաճեան, Հ. Յ. Դաշնակցութիւնը Իզմիրի Մէջ, «Հայրենիք» ամսագիր, Ժ. տարի, 1936, թիւ 9 (Յուլիս), էջ 139:



ընկերութեան (N.E.R.) Նաղարէթի որբանոցին մէջ, 1925 թ.ի Սեպտեմբերէն սկսեալ (139) :

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՅՈՅԻ 1871 (Թէոդոսիա, 1871) – Հակառակ անունին, իսկական տարեգիրք-տարեցոյցի բովանդակութիւն ունի: Տպուած Թէոդոսիա, Խալիբեան տպարանէն, 1871 թ.ին: 170 էջ (140) : 20×13 սմ.: «Օրացոյց»ը կը սկսի «Յանկ նիւթոց մեծադիր օրացոյցի»ով, որուն կը յաջորդէ Յովսէփ Դ. Երկայնարազուկ Արդութեանցի ընդարձակ կենսագրութիւնը (էջ 1–24), Յ. Տէր-Արրահամեանի կողմէ պատրաստուած: Առանձին բաժին մը տրամադրուած է հայկական հանելուկներու եւ առածներու (էջ 77–87) : «Ժամանակախօսութիւն» բաժինին մէջ ընդարձակ տեղեկութիւններ կան ժամանակը բաղկացնող տարրերու, հայկական եւ այլ թուականներու մասին: Ունի նաեւ բաժին մը՝ «Ամսացոյց գիւղական մշակութեան» խորագրով:

ՊԱՐՏԷՉ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՂԿԱՆՑ (Պարտիզակ) – Տես՝ ԹՕՀԱՅԻ

ՊԱՐՏԻՉԱԿ (Պարտիզակ, 1879^o) – Հայ պարբերական մամուլի մատենադիտութեան մէջ ծանօթ է 1909 թ.ին լոյս տեսած համանուն թերթ մը, որ հրատարակուած է Պարտիզակի ամերիկեան բարձրագոյն վարժարանի ընթացաւարտներու միութեան կողմէ, լոյս տեսած

139. Պէյրութի Ամերիկեան համալսարանի դրողարանի արխիւներուն մէջ պահպանուած է այս թերթէն թիւ մը. Ա. տարի, թիւ 3-4, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1925, 22 էջ:

140. Մեր տրամադրութեան տակ եզող օրինակէն կը ստացուի այն տպաւորութիւնը, թէ հատորին վերջաւորութեան էջեր կը պակսին:

11 թիւ, մինչեւ 1914 թ., խմբադրութեամբ Յովսէփ Տէր Ստեփան-
հանի: Եղած է վեցամսեայ, տպուած՝ Կ. Պոլիս (141): Վիեննայի Մը-
խիթարեան միարանութեան մատենադարանին մէջ կայ, վերոյիշեալէն
անկախ, խմորատիպ «Պարտիզակ» անունով թերթ մը՝ մէկ թիւ (թիւ
1), լոյս տեսած 1908 թ.-ին (142): Այլ ազրիւրի մը համաձայն, տպա-
դիր «Պարտիզակ»էն 30 տարի առաջ զոյութիւն ունեցած է «խմորա-
տիպ նոյնանուն թերթ մը՝ Արմենակ Տ. [էր] Յակոբեանի եւ Մինաս
Ծալեանի (143) խմբադրութեամբ» (144):

ՊՍԱԿ (Կ. Պոլիս) – Տես՝ ԴԱՐՄԱՆ

ՋԱՀԱԿԻՐ (Յրէզնօ, ԱՄՆ, 1954) – Կրօնական, ընտանեկան եւ
ազգային անկախ երկամսեայ հանդէս: Տնօրէն–խմբադիր՝ Վեր. Ար-
չակ Պ. Հիւսեան: 32 էջ: 24×16 սմ.: Առաջին համարին թուականն է՝
1954, Ա. տարի, Յունուար–Փետրուար: Թերթին վերջին 5 էջերը՝
անդլերէն թովանդակութեամբ:

Նոյն անունով եւ նոյն քաղաքին մէջ, կրկին խմբադրութեամբը
Վեր. Ա. Պ. Հիւսեանի, 1944–1945 թթ.ուն լոյս տեսած է ամսադիր մը,
որ հանդիսացած է պաշտօնական հրատարակութիւնը Գալիֆոռնիոյ
Հայ Աւետ. Միութեան: 1954 թ.-ի «Ջահակիր»ը անուանակիցէն բոլոր-
ովին անկախ թերթ մըն է, որուն նախաձեռնութիւնը կը պատկանի
Վեր. Ա. Պ. Հիւսեանի:

ՋԱՀԱԿԻՐ (Թեհրան, 1963) – Մեքենադիր բազմադրուած: Ամ-
սաթերթ: Հոդեւոր, բարոյագիտական, առողջապահական եւ տեղեկա-
տու պարբերական: Հրատարակութիւն Իրանի Գալստական Եկեղեցիին:
Հիմնադիր–խմբադիր՝ Հայկ Կ. Սալաքեան (մահացած՝ 1974 թ.-ի Ապ-
րիլին): խմբադրին մահէն ետք՝ խմբադրական աշխատանքը կը ըս-
տանձնէ յանձնախումբ մը, որուն անդամներէն են՝ Հովիկ Սառաֆ-
եան եւ Հ. Աւետիսեան: Սկսած է հրատարակուիլ 1963 թ.-ին, եւ կը
չարունակէ լոյս տեսնել կանոնաւորաբար: 12 էջերէ բաղկացած է
միշտ: 28×21.5 սմ.:

141. Ա. Կիրակոսեան, Աշ. աշխ., էջ 425:

142. Հ. Ռաֆայէլ Կարապետեան [Թօսեան], Լիակատար Յուցակ Հայերէն Լը-
րագիրներու, Որոմբ Կը Գոմուիմ Միքիթարեան Մատենադարանին Մէջ Ի Վիեննա,
Վիեննա, 1924, էջ 63:

143. Երկուքն ալ տնօրէն Գ. Շիրինեանի պատրաստած աշակերտներէն, որոնք
Պարտիզակէն Ռոպէրթ Գոլէճ զացող առաջին ուսանողներէն հանդիսացան, ապա դար-
ձան ծանօթ դաստիարակներ եւ մտաւորականներ:

144. Յ. Տէր Յակոբեան, Աշ. աշխ., էջ 225:

LE FLAMBEAU

Ջ Ա Հ Հ

*Bulletin de l'Amicale des
Anciens Combattants Arméniens de l'Armée Française*

ՋԱՀՀ - LE FLAMBEAU (Մարտէյլ) - Bulletin de l'amicale des Anciens Combattants Arméniens de l'Armée Française (Տեղեկատու Ծրանսական Բանակի Հայ Նախկին Մարտիկներու Ընկերակցութեան) : Մարտէյլ, սպ. Ձաւէն : 28×22 սմ. : Առանց էջաթիւերու (8 էջ) : Թուական չունի, սակայն լոյս տեսած է ընկերակցութեան ընդհ. Ժողովէն (Սեպտ.ի 27, 1961 թ.) ետք, հաւանաբար 1962 թ.ին : Վերոյիշեալ ընդհ. Ժողովին որոշուած է հրատարակել տեղեկատու մը (այսինքն՝ «Ջահը»), որ կրնայ հանդիսանալ ընկերակցութեան օրկանը : Այս դործին համար ընտրուած է նախկին մարտիկներէն մէկը՝ Միստիկ անունով : «Ջահը»ի այս թիւէն կ'իմացուի նաեւ թէ նախապէս հրատարակուած են չորս տեղեկատուներ եւս :

ՋԱՆՔ (Փարիզ, 1934) - Լրիւ անունը՝ «Ջանք» Այլօմ-Օրացոյց 1935 : Հրատարակիչ՝ Վ. Կէօքճեան : Տպագրութիւն՝ Ժ. Ներսէս : Առանց էջաթիւի (24 էջ) : 26.5 × 18 սմ. : Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան հրատարակութիւն : Օրացուցային բաժինէն, տօնական օրերու, «հնչակեան» ու «միջազգային» թուականներէ զատ, արտատպումներ կան՝ Մարքսէն, Լենինէն, Սապահ-Գիւլեանէն, եւն. : Կան լուսանկարներ՝ Հնչակեան կուսակցութեան զործունէութիւնը պատկերող :

ՄԻՄՈՆԻԿԻՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ (Կ. Պոլիս, 1940) - Հրատարակիչ՝ Սիմոն Մելիքեան : Տպագրութիւն՝ Արթուր, 1940 թ. : 48 էջ : 20×14 սմ. : Բովանդակութիւնը՝ երգիծական գրութիւններ եւ բանաստեղծութիւններ : Հրատարակիչին կողքին, ստորագրած են նաեւ՝ Կ. Ջաղըճեան, Յակոբ Սլասիան, Զ. Արշակ եւ ուրիշներ :

ՄԻՆԷՄԱ (Կ. Պոլիս, 1921) - Երգիծական պատկերներ, Ա. պըրակ : 16 էջ : 24×16.5 սմ. : Տպագրութիւն եւ հրատարակութիւն՝ Մ. Տէր-Սահակեան : Բովանդակութիւնը կը կազմեն արտատպումներ՝ կատարուած «Լոյս»էն (1903-1904), «Հանրագիտակ»էն (1905), «Հի Հի Հի»էն (1910), շատ հաւանաբար Մ. Տէր-Սահակեանի զրիչին պատկանող երգիծական գրութիւններէն (145) :

ՍՈՈԱԿ (Պարտիզակ, 1870) – Խմորատիպ կամ ձեռագիր: Պարտիզակի Ազգային վարժարանի աշակերտութեան թերթը: Այս թերթին մասին կ'իմանանք վարժարանի տնօրէնին ու պարտիզակցի Յովհաննէս Քահանայ Մկրեանի (այդ օրերուն Կ. Պոլսոյ Պատրիարքական փոխանորդ) միջեւ փոխանակուած նամակներէն, զորս տպած է Պոլսոյ «Մասիս»ը: Տնօրէն Գէորդ Մ. Շիրինեան, Հոկտեմբերի 21, 1870 թուակիր նամակին մէջ կը գրէ. «... նամակիս հետ ղրկուած երկու թիւ «ՍՈՈԱԿՆԵՐ»ը ձեր հայրենեաց դպրոցի նախասայրիքն են, որ ձեզ կ'ուղղուին իբր շնչին փոխարէն ձեր ազգասիրական ջրտանց զորս թափած էք նոյն դպրոցին համար ձեր պատանութենէն ի վեր»: Քանի մը տող վար կ'աւելցնէ. «ՍՈՈԱԿին թռիչները դեռ շատ տկար են» (146):

Թէոդիկ ալ ունի ակնարկութիւն մը այս թերթի մասին, երբ կը խօսի Փրոֆ. Արբ. Տէր Յակոբեանի մասին. «Մնած է Պարտիզակ՝ ուր նին. կրթութիւնը հազիւ ստացած, մատող հասակէն կը սկսի վարել ուսուցչական պաշտօն եւ խմբագիրը կ'ըլլայ «Սոխակ» ձեռագիր թերթի մը, այն ատենի հայ լրագիրներէն համակրանօք ողջունուած» (147)

Տնօրէն Մ. Շիրինեան, որ Պոլսէն հրաւիրուած էր Պարտիզակ, 1875 թ.ին կը մեկնի Ատափազար՝ պաշտօնով, նոյն ատեն Աբր. Տէր Յակոբեանը կը գտնենք Ռոպէրթ Գոլէճ, որմէ ընթացաւարտ կ'ըլլայ 1877 թ.ին՝ ստանալով «Պսակաւոր Արուեստից» վկայականը:

Ուստի, եթէ նկատի ունենանք որ 1860 թ.ին ծնած Աբրահամ Տէր Յակոբեանը «մատող հասակէն» կը դառնայ ուսուցիչ եւ խմբագիր «Սոխակ»ի ու 1875 թ.ին արդէն մեկնած է Պոլիս, ինչպէս նաեւ թերթի հովանաւոր տնօրէն Գ. Մ. Շիրինեանի մեկնումը Ատափազար, կրկին 1875 թ.ին, կրնանք ըսել որ թերթը շաւ հաւանաբար դոյատեւած է մինչեւ վերոյիշեալ թուականը:

ՍՈՈԱԿ ԾԱՒԱՐՇԱՆԱՅ (Կ. Պոլիս, 1900^o) – Խմբագիր՝ Լեւոն Էսաճանեան: Լոյս ընծայուած՝ Ազգային Որբանոցին մէջ, ուր ապաստանած է Լեւոն՝ ծանօթ ջարդերէն ետք, գալով գաւառէն: Երբ ջանաւարտ՝ 1899–1900 տարեշրջանին: Իր ինքնակենսագրութեան մէջ՝ Լ. Էսաճանեան կը գրէ. «...երկու ամիսը անգամ մը ձեռագիր թերթ խմբագրելու կը ձգտէի, «Սոխակ Եւարչանայ» արգելուած խորագիրներով: Ձեռագիր շարթաթերթ մը, զոր խնամքով հանեցի

146. Գ. Մ. Շիրինեանի եւ Յովհ. Քահայ. Մկրեանի միջեւ փոխանակուած վերոյիշեալ նամակներուն համար տես՝ «Մասիս», Կ. Պոլիս, 1870, թիւ 1022, էջ 3:

147. Թէոդիկ, Ամէնում Տարեցոյցը, ԺԵ. տարի, 1921, էջ 198:

դաւառցի տղոց ի նպաստ...» (148) :

ՄԲ. ՎԱՐԴԱՆ (Վան, 1907) – Խմորատիպ : Օրկան Վանի Որբա-
նոցի աշակերտներու (149) : Վանի Երամեան վարժարանը նախապէս
կը ճանչցուէր այս անունով :

ՍՈՒՐԲ ՓՐԿԻԶ (Կ. Պոլիս, 1922) – Խմորատիպ : Մէկ կամ եր-
կու թիւ : Խմբագրները հանդիսացած են Սը. Փրկիչի ուսուցիչներ՝
Բենիամին Թաշեան եւ Արտաշէս Տէր-Գէորգեան (150) :

ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿ (Նիկոմիդիա-Իզմիտ, 1848) – Չաւեչտաթերթ :
Խմբագիր՝ Համբարձում Գերովրէեան : Այս թերթին մասին կը յիշա-
տակեն Թէոդիկ եւ Վահան Զարդարեան, երբ կը խօսին ծանօթ խմբա-
գիր-տպագրիչ Արբազամ Մուրատեանի մասին : Թէոդիկ կը զըէ. «Հոն
[Նիկոմիդիա] ձեռագիր հրատարակուող Համբ. Գերովրէեանի «Սուր-
հանդակ» Չաւեչտաթերթն ու Յովհ. Մկրեանի «Բանբեր Պարտիզակ-
եան»ը դրդիւ կ'ըլլան Արբազամի՝ տպագիր թերթի մը հրատարակու-
թեան» (151) : Նոյնը կը կրկնէ Վահան Զարդարեան, որ կու տայ նաեւ
հետաքրքրական մանրամասնութիւններ «Սուրհանդակ»ի մասին : Ըստ
Զարդարեանի, Նիկոմիդիոյ վարժարաններու հոգարարձուներէն
Համբարձում Գերովրէեան «երբեմն երբեմն Չաւեչտական թերթ մը
կը հրատարակէ ձեռագիր Սուրհանդակ անունով եւ վարժարանի ա-
շակերտներուն օրինակել տալով, Պոլիս՝ ամիրաներուն կը զըկէ, որ-
պէսզի զուարճանան : Այդ թերթը եզակի համբաւ ունեցած է այն
ատեն, եւ մեծ հաճութեամբ կը կարդային, ձեռքէ ձեռք կը պտտէր
...» (152) :

Ուրեմն, ինչպէս կը տեսնուի վերեւի տուեալներէն, Արբազամ
Մուրատեան, խթանուած «Սուրհանդակ»ի եւ «Բանբեր Պարտիզակ-
եան»ի փորձերէն, կը ձեռնարկէ իր թերթին՝ «Հայրենասէր»ի հրա-
տարակութեան, որ լոյս կը տեսնէ 1850 թ.ի Մայիսի 1-էն մինչեւ 1853
թ. : Իսկ «Բանբեր Պարտիզակեան»ի հրատարակութեան թուականն է՝
1847 թ. : Վահան Զարդարեան, «Սուրհանդակ»ի հրատարակութեան
թուականը կը զետեղէ «Բանբեր Պարտիզակեան»ի հրատարակութեանէն
ետք, եւ անուշտ «Հայրենասէր»էն առաջ (153) : Ուրեմն, կարելի է

148. Թէոդիկ, Ամէնում Տարեցայցը. 1910, Կ. Պոլիս, [1909], էջ 155-156 :

149. Ն. Յովհաննէսեան, Աշ. աշխ., էջ 307 : Ե. Տէր Մկրտիչեան, Աշ. աշխ.,
էջ 623 :

150. Տեղեկութիւնները հայթայթուած են խմբագիր Ա. Տէր-Գէորգեանի կողմէ :

151. Թէոդիկ, Տիպ ու Տառ, էջ 141 :

152. Վահան Զարդարեան, Թրքահայ Լրագրութիւն, 1832-1932. Հարիւրամ-
եակ, «Յիշատակարան», Մատենաշար Թիւ 4, Գահիրէ, 1932, էջ 11 :

153. Նոյնը, էջ 10-11 :

հետեւցնել «Սուբհանդակ»ի հրատարակութեան թուականը, որ ըստ-
րու է՝ 1848-1849:

ՎԱՐԱԳ (Վան, 1913) - Խմորատիպ: Հրատարակութիւն Վա-
րազի որբանոցի աշակերտութեան, Արտակ Դարբինեանի տեսչութեան
օրով (154): Խմբագիր՝ Մարտիրոս Տապաղեան, որ հետագային պի-
տի դառնար հայրենի ծանօթ դրող Վեսպէրը (155):

ՎԵՐԱԾՆՈՒՆԻ (Գահրէ, 1930) - Գալուստեան վարժարանի
Զ. կարգին մէջ, Ս. Պալեան, քանի մը դասընկերներու աջակցու-
թեամբ, կը հրատարակէ «Վերածնունդ» ամսաթերթը՝ խմորատիպ:
Ս. Պալեան կը յայտնէ նաեւ, թէ «Վերածնունդ»ը կը շարունակուի
Պէրպէրեան վարժարանին մէջ՝ «Նոր Սերունդ» անունով, 1932 թ.-ին
(156):

ՎՏԱԿ (Վան, 1907) - Ամսաթերթ: Խմորատիպ (157):

DÉCINES ARMÉNIEN

Bulletin bilingue de la Communauté Arménienne de Décines

Responsables de la publication : Père V. AVAKIAN et Pasteur S. SAHAGIAN.

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԹԵՐԹԻԿ

ՏԷՍԻՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Խմբագրութեամբ՝ ՏԷՐ ՎԱՐԱԳ ԲԶՆՅ. ԱԻԱԳԵԱՆԻ ԵՒ ՊԱՏՈՒԵԼԻ ՍԱՄՈՒԷԼ ՍԱՀԱԿԵԱՆԻ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԹԵՐԹԻԿ ՏԷՍԻՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ (Տէսին, 1963) -
Մեքենագիր բազմադրուած: Խմբագիրներ՝ Տէր Վահագ ԳՀՆՅ. Աւագ-
եան եւ Պատուելի Սամուէլ Սահակեան: Նիւթական օժանդակու-
թեամբ՝ Հ. Բ. Ը. Մ.-ի: Բովանդակութիւն՝ Հայ եկեղեցւոյ մասին
գիրտելիքներ, Տէսինի (Ֆրանսա) հայ առաջելական եւ աւետարանա-
կան եկեղեցիներու լրատուութիւն, եւ շրջանի դաղութի մշակութա-
յին եւ այլ շարժումներու արձագանդ: Պարբերականութիւնը կարելի
է եղաւ ստուգել: Մեր տրամադրութեան տակ եղող թիւը ունի հետեւ-

154. Արտակ Դարբինեան 1905 թ.-էն սկսեալ կը դառնայ տեսուչը Վարազայ
որբանոցին:

155. Տես՝ Ն. Յովհաննէսեան, մշ. աշխ., էջ 307: Եւ Տէր Մկրտիչեան, մշ.
աշխ., էջ 625:

156. Ս. Պալեան, Թերթի Գործի Պատմութեան, «Ջահակեր» (Գահրէ), Նոր
շրջան, թիւ 52 (12 Նոյեմբեր, 1964), էջ 3:

157. Եւ Տէր Մկրտիչեան, մշ. աշխ., էջ 625:

եալ արձանագրութիւնը. Թիւ 7, Ապրիլ 1964: 6 էջ: 31×11 սմ.: Իսկ բովանդակութեան մէջ կան արձագանգներ 1963 թ.ի Դեկտեմբեր ամիսէն, բան մը, որ մտածել կու տայ թէ 1964 թ.ին, մինչեւ Ապրիլ, ուրիշ թիւ չէ եղած: Հաւանական է որ թերթը լոյս տեսնել սկսած է 1963 թ.ի սկիզբը:

ՅՈՒՑԱԿ (Կալիպթա, 1824) – «Յուցակ», «Յուցաք» կամ «Օրացոյց» բնորոշուած այս հրատարակութիւնը, որ գոյատեւած է շուրջ կէս դար, արդարօրէն կարելի է նկատել տարեգիրք-տարեցոյց: Այս մասին արդէն ակնարկուեցաւ այս աշխատասիրութեան սկիզբը:

Կիլիկիոյ Կաթողիկոսարանի մատենադարանին մէջ կան վերոյիշեալ հրատարակութեան զանազան տարիներու 11 հատորները, որոնք կը ներկայացուին ստորեւ առանձին-առանձին, պահելով իրենց անուանաթերթին վրայ յիշատակուած անունները այնպէս՝ ինչպէս որ են.

ՅՈՒՑԱԿ Վասն ամի Տեառն 1824. Տպագրեալ ի Մարդասիրական Մամլոջ: 81 էջ:

ՅՈՒՑԱԿ Վասն ամի Տեառն 1825. Տպագրեալ ի Մարդասիրական Տըպարանի: 106 էջ:

ՅՈՒՑԱԿ Վասն ամի Տեառն 1826. Տպագրեալ ի Մարդասիրական Տըպարանի: 112 էջ:

ՅՈՒՑԱՔ Վասն Ամի Տեառն 1827. Տպագրեալ ի Մարդասիրական Տըպարանի: 36 էջ:

ՅՈՒՑԱԿ Վասն Ամի Տեառն 1828. Տպագրեալ ի Տպարանի Մարդասիրական ձեմարանի: 36, 9 չհ. էջ:

ՅՈՒՑԱԿ Վասն Ամի Տեառն 1829. Տպագրեալ ի գործատան Մարդասիրական ձեմարանի: 100 էջ:

ՕՐԱՅՈՅ Վասն Ամի Տեառն 1849. ի Տպարանի Մարդասիրական ձեմարանին: 56 էջ:

ՕՐԱՅՈՅ Վասն Ամի Տեառն 1954. ի Տպարանի Մարդասիրական ձեմարանին: 52 էջ:

ՕՐԱՅՈՅ Վասն Ամի Տեառն 1855. ի Տպարանի Մարդասիրական ձեմարանին: 44 էջ:

ՕՐԱՅՈՅ Վասն Ամի Տեառն 1856. ի Տպարանի Մարդասիրական ձեմարանին: 60 էջ:

ՕՐԱՅՈՅ Վասն Ամի Տեառն 1857. ի Տպարանի Մարդասիրական ձեմարանին: 60 էջ:

Ե՞րբ սկսած է լոյս տեսնել Մարդասիրական ձեմարանի «Յուցակ»ը կամ «Օրացոյց»ը: Այս մասին միակ վկայութիւնը, որ հետագային օգտադործուած է, կու դայ Գարեգին Վրդ. Զարբհանեկեանէն: Ան կը յայտնէ. «Ի Կալիպթա Հնդկաց, Մարդասիրական ձեմարանի

տպարանէն հրատարակուած են օրացոյցք 1816 թուականէն 'ի 1873-թէպէտեւ վերջի տարիները ընդհատութեամբ» (158) :

Հայկ Դաւթեան, իր «Հայ Գիրքը 1801-1850 թուականներին» մատենագիտական գիրքին մէջ կ'օգտագործէ Ջարբհանեանի հայ-թայթած անորոշ տեղեկութիւնները, որոշ հարցադրումներով, եւ կը ներկայացնէ Երեւանի Մատենադարանը դաժնուող 1827 եւ 1829 թթ. ու հատորները: Ան կ'ըսէ. «Յայտնի է, որ Կալիաթայի Մարդասիրական ձեմարանը բացուել է 1821 թ. Ապրիլին, իսկ տպարանը հաստատուել է հետագայ մէկ-երկու տարիներէ ընթացքով: Հետեւաբար մինչեւ այդ՝ Մարդասիրական ձեմարանի հրատարակած օրացոյցներ լինել չեն կարող: Մեզ համար սարգ չէ, թէ Ջարբհանեանը ինչ հիման վրայ է Կալիաթայի ամենամեայ օրացոյցների հրատարակութիւնը 1816 թուականից սկսում»: Հակառակ այս իրողութեան, Հ. Դաւթեան կը շարունակէ. «Հնարաւոր է, որ այլ տպարաններում տպագրուած լինեն, այն էլ ոչ ամէն տարի» (159) :

Մարդասիրական ձեմարանը, ուրեմն, հիմնուած է 1821 թ. ի Սեպտեմբեր 2-ին. վերոյիշեալ «Յուշակ»ներուն մէջ յաճախ յիշատակուած է այս սարաղան: 1829 թ. ի «Յուշակ»ին մէջ (էջ 73-74), տրուած է ցանկը Մարդասիրական ձեմարանի տպարանէն լոյս տեսած գիրքերուն, հետեւեալ խորագրով. «Տպարան հաստատեալ ի Մարդասիրական ձեմարանի, ի 1 Յունվարի, 1824: Յուշակ գործոց մինչ ցարդ լոյս ընծայելոց ըստ կարգի այբուբենից»:

Ուրեմն, ըստ վերոյիշեալ հաստատումին, տպարանը հաստատուած է 1824 թ. ի Յունուարի 1-ին: Սակայն տրուած ցանկին մէջ յիշատակուած է 1823 թ. ին հրատարակուած Միքայէլ Չամչեանի «Քերականութիւն»ը: Այս սարաղան ուշադրութիւնը դրաւած է Հայկ Դաւթեանին: Հետաքրքրական է նաեւ այն՝ որ մեր նկարագրած 1824-1829 թթ. ու «Յուշակ»ներէն եւ ոչ մէկը յիշատակուած է այդ ցանկին մէջ:

Հայկ Դաւթեան, իր մատենագիտական գիրքին մէջ, Չամչեանի «Քերականութիւն»ը կը ներկայացնէ 1829 թ. ի «Յուշակ»էն քաղելով իր տեղեկութիւնը, առանց խնդրոյ առարկայ գիրքը տեսնելու, քանի որ ծանօթ գրադարաններու հաւաքածոներուն մէջ չկայ ան: Ուստի, տպագրական սխալի մը հաւանականութիւնը (1823՝ փոխանակ 1828 թ. ի) անկարելի չէ:

158. [Հ. Գարեգին Ջարբհանեան], Հայկական Մատենագիտութիւն, Վեներաբիլ, 1883, էջ 725:

159. Հայկ Դաւթեան, Հայ Գիրքը 1801-1850 թուականներին. Մատենագիտութիւն, Երեւան, 1967, էջ 69:

Ամէն պարագայի, պատճառներ կան մտածելու, թէ Մարդասիրական ձեմարանի «Յուցակ»ը սկսած է 1824 թ.ին եւ ոչ թէ 1816 թ.ին, ինչպէս կը հաղորդէ Հ. Զարբհանելեան: Մարդասիրական ձեմարանի Հիմնումի դադարաւորը ծնունդ առած է 1816-1817 թթ.ուն, եւ թերեւս այս պարագան շփոթ ստեղծած է անոր մտքին մէջ:

Մեր տրամադրութեան տակ եղող «Յուցակ»ները (1824-1829 թթ.) պատկանած են նոյն թուականներուն Կալիաթա պարող Նիկողայոս Յարութիւնեանցի, ինչպէս կ'երեւի անոնց վրայ եղած ձեռագիր դրութիւններէն: Անոնք, այդ 6 հատորները, մտած են մէկ կողքի տակ: Նոյն կողքի տակ, 1824 թ.ի «Յուցակ»էն առաջ, կայ նաեւ 1823 թ.ի հրատարակուած «Օրացոյց Ամի Տեսուն 1823...» հատորը, «Տըպալըբալ յՕճանասիրութեանց Տպարանի, ի Կալիաթա, ի 1 Յունվարի, յամի Տեսուն 1823»: 62 էջերէ բաղկացած այս օրացոյցը (այս պարագային իսկական օրացոյց է, եւ չենք ուզեր պարբերաթերթ համարել զայն) պատրաստած է Մարտիրոս Մկրտչեան (160):

Կալիաթայի Օճանասիրութեան տպարանէն ծանօթ են 1822-23 թթ.ու հրատարակուած մի քանի գիրքեր: Նոյն տպարանէն լոյս տեսած է նաեւ Մ. Մկրտչեանի «Օրացոյց»ը: Օճանասիրութեան տպարանը դադարած է գործել՝ գոյառումովը Մարդասիրական ձեմարանի տպարանին: Դժուար է մտածել, որ Կալիաթայի նման փոքր դպրութի մը մէջ, 1823 թ.ին, լոյս տեսած ըլլան համանման զոյգ օրացոյցներ, նոյն նպատակին ծառայող: Հաւանական է որ 1823 թ.ի օրացոյցը նախընթացներ ունեցած ըլլայ, եւ 1816 թ.էն մինչեւ 1822 թ. լոյս տեսած ըլլան այլ օրացոյցներ եւս, սակայն մեր հաստատ համոզումն է որ Մարդասիրական ձեմարանի հրատարակածները սկսած են 1824 թ.ին, եւ անոնց սկիզբի անունը եղած է «Յուցակ», ապա՝ վերամրկըրտուած «Օրացոյց»:

Ե՞րբ դադարած է հրատարակութիւնը Մարդասիրական ձեմարանի ամենամեայ «Յուցակ» - «Օրացոյց»ին: Զարբհանելեան կ'ըսէ՝ 1873: Կրկին ապացոյցներ կը պահուին: Սակայն, թէոդիկ, անտեղեակ Զարբհանելեանի տեսակէտին, իր կողմէ կը յայտնէ թէ «Հայկեան մարդասիրական ձեմարան»ի գործատան մէջ, այլ գիրքերու կողքին, հրատարակուած է «Օրացոյց», 1867 եւ 1870-1 թթ.ուն (161):

Ինչո՞ւ այսքան ծանրացանք Մարդասիրական ձեմարանի այս հրատարակութեան վրայ: Ինչպէս քանի մը անգամ կրկնուեցաւ, «Յուցակ»ներու եւ «Օրացոյց»ներու այս շարքը սովորական տօնացոյց-

160. Մ. Մկրտչեանի «Օրացոյց»ը ցարդ ծանօթ չէ հայ գիրքի մատենագիտութեան:

161. Թէոդիկ, Տիպ ու Տառ, էջ 175:

տարեցոյցներու դասէն դուրս կու գայ : Բովանդակութեամբ հարուստ այս պարբերական (միամեայ) հրատարակութիւնը մեծապէս կ'օգնէ ծանօթանալու հնդկահայ եւ մասնաւորաբար կալկաթահայ մեր փոքր, սակայն կարեւոր դաղութի մշակութային, ազգային ու հասարակական կեանքին, որ այնքան սերտօրէն կապուած է 19-րդ դարու հայ ժողովուրդի կեանքի վերելայրումներուն : Բաղմաթիւ վկայութիւններ կան ծանօթ մանկավարժ, հասարակական գործիչ ու մտաւորական Մեսրոպ Թաղիաղեանցի, Յովհաննէս Ալիալեանցի, Յակոբ Ջըրպետի մասին . Թաղիաղեանցի անծանօթ մնացած բանաստեղծութիւններ կան տպուած 1825 եւ 1826 թթ. ու «Յուշակ»ներուն մէջ : Գաղութի առօրեային հետ առնչուող նիւթերէն անկախ, վկայութիւններ կան դաղութիւն՝ կովկասահայութեան, եւ այլ դաղութիւններու հետ զոյու-թիւն ունեցող կապերու եւ շփումներու մասին :

Վստահ ենք որ ժամանակի ընթացքին, պիտի դնուին այս շարքին մաս կազմող նոր հատորներ, եւ աւելի ամբողջական պատկերացում պիտի ունենանք ե՛ւ հրատարակութեանց եւ անոնց բովանդակութեան մասին :

ՓՈՐՁԱՆՔ (Երզնկա) – Երգիծաթերթ : Սահմանադրութենէն ետք, 1909 թ.ին, Երզնկայի մէջ լոյս կը տեսնէ «Արօր» ամսագիրը, որմէ «Վերջ, քանի մը թիւ ալ «Փորձանք» անուն երգիծաթերթ մը հրատարակուեցաւ՝ Սահակ Պոյաճեանի խմբադրութեամբ» (162) : Նրկատի ունենալով որ Երզնկայի մէջ տպարան դոյութիւն չունէր (163), կարելի է ենթադրել որ «Փորձանք»ը եղած է խմորատիպ, ինչպէս «Արօր»ը՝ սկզբնական շրջանին, մինչեւ անոր տպագրութեան փոխադրութիւնը նախ Տրապիզոն, ապա՝ Կարին :

ԲԱՂՈՒԱԾՆԵՐ (Պէյրութ, 1952) – Մեքենադիր-բաղմադրուած : 1952-1953 թթ.ուն լոյս տեսած : Միջազգային համայնալար շարժումի օրկան՝ «Յանուն տեւական խաղաղութեան, յանուն ժողովրդական դեմոկրատիայի» շարաթաթերթի յօդուածներէն կատարուած թարգմանութիւններ կը կազմեն բովանդակութիւնը «Քաղուածներ»ուն : Մեր տրամադրութեան տակ ունինք անոր 10-րդ համարը, որուն թուականն է՝ 1953 թ.ի Փետրուար : Բաղկացած է 5 էջերէ, չափը՝ 30×11 սմ. : Գինը՝ 15 դահեկան :

ԲՆԱՐ (Կ. Պոլիս, 1925) – Խմորատիպ ամսաթերթ : Հրատարակութիւն Պէշաղեան լիւէի ուսանողութեան : Խմբագիր՝ Վահան Կոս-

162. Գ. Սիրմէնեան, Երզնկա, էջ 208 :

163. Նոյնը, էջ 207 :

տանեան : Լոյս տեսած՝ շուրջ 6 ամիս, 1925-26 թթ. ուն (164) :

ՕՐԱՑՈՅՑ (Կալկաթա) - Տես՝ ՅՈՒՑԱԿ

ՔՆԱՐԻԿ (Օլիմպոս, 1908) - Խմորատույ թերթ : Լոյս տեսած Սահմանադրութենէն ետք, Պարտիզակի Օլիմպոս գիւղին մէջ (165), քանի մը թիւ միայն (166) :

[ԱՆԱՆՈՒՆ ԹԵՐԹ] (Վան, 1881) - Վանի որբանոցի (ապա՝ Երամեան վարժարան) անդրանիկ սաներէն Մարտիրոս Նալչանտեան եւ Մամբէ Մկրեան, տակաւին աչակերտ, 1881 թ. ին կը սկսին հրատարակել ձեռագիր երկչարաթաթերթ մը : Պարբերաթերթը խմորատիպի կը վերածուի, երբ Ռուսաստանի Վանի հիւպատոս Կոստանդին Կամարական, խանդավառուած վերոյիշեալ նախաձեռնութենէն, կը նուիրէ բօլիկրաֆ (բաղմադրող) մեքենայ մը : Պատանի խմբադիրները թերթին սպաքանակը կը բարձրացնեն 100 օրինակի : Այլ վայրերու մէջ թղթակիցներ ալ կ'ունենան : Դժբախտաբար, այս տեղեկութիւնները հաղորդող Համբարձում Երամեան (վարժարանին տնօրէնը) չի յիշատակեր թերթին անունը (167) :

*

**

Արդդ եւ կարճ ակնարկով կու տանք նաեւ ցանկը կարդ մը ձեռագիր թերթերու, որոնք ընդհանրապէս պատրաստուած են ծանօթ անձնաւորութիւններու կողմէ, եւ շատ յաճախ՝ մէկ օրինակով : Դժուար է այսօր, եթէ ոչ անհնար, օրինակներ գտնել ձեռագիր այս թերթերէն, այսուհանդերձ սակայն շահեկան է արձանագրել անոնց անունները :

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԹԵՐԹ (Թիֆլիս, 1881) - Երկչարաթաթերթ : Ներսիսեան վարժարանի Դ. դասարանի աչակերտներուն կողմէ պատրաստուած, իրենց հայերէնի ուսուցիչին հովանաւորութեամբ (168) :

ԱՍՏՂ (Թիֆլիս) - Պատկերադարդ թերթ : Կրկին՝ Ներսիսեան վարժարանէն, 1860-ական թուականներուն : Օժանդակութեամբ Ստեփան Պայասանեանի (169) :

164. Նաում Սաղանանէ քաղուած տեղեկութիւններու հիման վրայ :

165. [A. Alboyadjian], Les Armeniens..... Նոյնին՝ Հայերը եւ

Տպագրութիւնը, էջ 137 :

166. Յակոբ Տէր Յակոբեան, Բշ. աշխ., էջ 225 :

167. Համբարձում Երամեան, Յուշարձան, Հար. Բ., Աղեքսանդրիա, 1929, էջ 123 :

168. Տես՝ Գ. Գրիգորեան, Ներսիսեան Դպրոց (Համառոտ Ակնարկ), Երևան, 1975, էջ 78 : Նաեւ՝ Աւետիք Զանջուղազեան, Բշ. աշխ., էջ 52 :

169. Աւետիք Զանջուղազեան, Բշ. աշխ., էջ 52 :

ԳեղՕՆ (Կ. Պոլիս, 1899) – Խմբադեր՝ Արշակ Ալպոյաճեան (170) :

Գիր ԵԻ ԱՐՈՒԵՍՏ (Հալէպ, 1938) – Պարբերաթերթ Ուսումնասիրաց վարժարանի պատանիներու խմբակի, որուն պատասխանատուն եղած է Գեղամ Մխիթեան : Խմբադեր՝ Լեւոն Վարդան : Միայն 2 թիւ :

ԴՈՂԴՈՋ ՔԱՅԼԵՐ (1898) – Խմբադեր՝ Յակոբ Տէր Մեղրոնեան : 1898 թ.ի Սեպտեմբերէն 1899 թ.ի Յունիս, 36 թիւ, իւրաքանչիւրը՝ 8 էջ (171) :

ԹՌՁՆԻԿ (Խարբերդ, 1877) – Շարաթաթերթ : Խմբադեր՝ Թըլկատինցի, Սմբատեան վարժարան աշակերտած ժամանակ (172) :

ԼՈՒՍԱՏՈՒՆ (Կ. Պոլիս, 1897) – Պէրպէրեան վարժարանի մէջ, աշակերտ Արմենակ Խելատուհեանի խմբադրութեամբ (173) :

ԼՈՒՍԻՆ (Կ. Պոլիս, 1890–1894) – Պէրպէրեան վարժարանի մէջ ուսանող Արշակ Ալպոյաճեանի խմբադրութեամբ : Աշխատակցած է նաեւ նոյն դպրոցի աշակերտ Վահան Թէքէեան (174) :

ԾԻԾԱՂ (Կ. Պոլիս, 1898) – Երզնիսթերթ : Կրկին Պէրպէրեանի սաներէն՝ Սիմոն Կօշկակարեանի խմբադրութեամբ (175) :

ԿՐԹԱՆՔ ԳՐՁԻ (Կ. Պոլիս, 1898) – Բանկալթիլի Բաղրատունի վարժարանին մէջ, խմբադրութեամբ՝ Գրիգոր Համբիկեանի եւ Շիրինեանի :

ՀԱՅՐԵՆԻ ԱՌՈՒԱԿ (Խարբերդ) – Խարբերդի զերմանական դուլէճին մէջ, խմբադրութեամբ՝ Նշան Փաշկանցի (176) :

ՀԱՒԱՔԱՅՈՅ (Կ. Պոլիս, 1898) – Պատրաստուած Կեդրոնական վարժարանի մէջ : Պատասխանատու՝ Բ. դասարան : Խմբադրութիւնը

170. Ա. Ալպոյաճեան, Անցեալի Յիշատակներ, «Ջահակիբ» (Գահիրէ), թիւ 36 (16 Յունիս, 1964) :

171. Գ. Պողարեան, Նօթեր Այնթապի Տպարանակամ ու Լրագրակամ Պատմութեանց Մէջ, «Հայ Անթէպ», 1966, թիւ 3, էջ 38 :

172. Թղկատինցի, Միշտ Նոյնը, «Մասիս», 1901, թիւ 20, էջ 315: Նաեւ՝ Լ. Կարապետեան, Թղկատինցի, Երեւան, 1966, էջ 27 :

173. Ա. Ալպոյաճեան, «Ջահակիբ», թիւ 36 (16 Յունիս, 1964) :

174. Ա. Ալպոյաճեան, «Ջահակիբ», թիւ 35 (9 Յունիս, 1964) :

175. Ա. Ալպոյաճեան, «Ջահակիբ», թիւ 36 (16 Յունիս, 1964) :

176. Վահէ Հայկ, Գր. աշխ., էջ 463 :

յաջորդաբար կը վարեն՝ Ա. Ալոյոյանեան, Սիմոն Կօչկահարեան եւ Գրիգէն Զարդարեան (177) :

ՄՐՁԻԻՆՆԵՐ (Խարբերդ) – Խմբադիր՝ Հրաչ Երուանդ : Քաջալուսեամբ Թւիտաինցիի, երբ խմբադիրը կ'աշակերտէ անոր, Կեդրոնական վարժարանի մէջ (178) :

ՈՒՍԱՆՈՂ (Թիֆլիս, 1899) – Ամսաթերթ : Հրատ. Ներսիսեան վարժարանի Գ. դասարանի աշակերտներու : Խմբադիր՝ Սիմոն Մըկըրտչեան : Երկու տարուան ընթացքին՝ 24 թիւ, 20–24 էջերով (179) :

ՍԼԱՔ (Թիֆլիս, 1901) – Յաւելուած՝ «Ուսանողի» : Նոյն խմբադրութեամբ : 4–5 թիւ (180) :

ՅԱԻՈՏ ԾԻԾԱՂՆԵՐ (Թիֆլիս, 1913–1917) – Աշակերտական երգիծաթերթ : Հիմնադիր եւ խմբադիր՝ Յարութիւն Յարութիւնեան : Նկարազարդողներ (ծաղրանկար)՝ Միքայէլ Մաղմանեան, Կարօ Հալարեան, Երուանդ Քոչար, Համօ Բաղդասարեան (181) :

Գ. Գրիգորեան, Ներսիսեան վարժարանի նուիրուած իր դերքին մէջ տակաւին կը յիշատակէ բաղմաթիւ աշակերտական թերթեր, առանց մանրամասնութիւններ տալու. «Յուննոստ», «Երգ եւ Ներկ», «Վաթան», «Ճաճանչ», «Կայծ», «Աշակերտ», «Արագած», «Արտիստ» (182) :

177. Ա. Ալոյոյանեան, «Ջաշակիր», թիւ 35 (9 Յուլիս, 1964) :

178. Աբամ Երեմեան, վաստակաւոր հմբագիրը (Հրաչ Երուանդի Ծննդեան 80-ամեակի Առթիւ), «Պայքար» օրաթերթ, թիւ 226 (20 Հոկտեմբեր, 1966) :

179. Ա. Զանջուղազեան, ՈՂ. աշխ., էջ 52–53 :

180. Նոյնը, էջ 53 :

181. Նոյնը, էջ 55 : Նաեւ՝ Գ. Գրիգորեան, ՈՂ. աշխ., էջ 111 :

182. Գ. Գրիգորեան, ՈՂ. աշխ., էջ 111 :

**ISSUES PERTAINING
TO THE HISTORY OF ARMENIAN PRESS**

JIRAIR TANELIAN

(Summary)

The first Armenian periodical was published in the year 1794, by Father Haroutune Shmavonian in Madras, India. From that date on, up to 1977, despite contradictory estimates by bibliographers, the author has found out that the history of the Armenian press numbers around 3800-4000 different titles of periodical publications.

The article brings out of oblivion 120 new titles of Armenian periodicals and journals, which have not been mentioned by the bibliographers of the Armenian Press.